

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն¹

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրով նախատեսված է իրականացնել **վեց ռազմավարական նպատակ**¹ միտված Ակադեմիայում ուսուցման որակի մշակույթի ամրապնդմանը, կրթական և գիտական գործընթացների ինտեգրմանը, լրացուցիչ և շարունակական կրթության զարգացմանը, գիտական հետազոտությունների արդյունքների ներդրման բարձրացմանն ու հետազոտություններում շահառուների մասնակցության ընդլայնմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, կորպորատիվ մշակույթի բարելավմանը, համագործակցային միջավայրի և անձնակազմի մասնագիտական որակների զարգացմանը, ֆինանսական կայունությանը, միջազգայնացման գործընթացի և միջազգային համագործակցության ընդլայնմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Իր ռազմավարական ծրագրով Ակադեմիան պլանավորել և իրականացնում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարմանն ուղղված գործունեություն: Դրանք հստակ արտացոլված են հիմնական ծրագրային փաստաթղթում և 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ծրագրում:

2019-2024 թթ. ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ծրագիրը մշակվել է Ակադեմիայի ներքին և արտաքին շահակիցների ակտիվ ներգրավվածությամբ՝ հաշվի առնելով նրանց կարծիքներն ու առաջարկությունները:

2019-2024 թթ. ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների մշակման համար ձևավորվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկվել են վարչական և

¹ Հիմք՝ Ակադեմիայի 2019-2024 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ծրագրի 4.1.2-րդ ենթակետ:

պրոֆեսորադասախոսական կազմերի ներկայացուցիչներ, ուսանողներ ու արտաքին շահակիցներ: Նշանակում է՝ հաշվի են առնվել հնարավոր բոլոր կողմերի կարծիքները, կարիքներն ու առաջարկությունները:

Նախագծային տարբերակը տարբեր փուլերում ներքին ցանցով երեք անգամ տրամադրվել է Ակադեմիայի բոլոր ստորաբաժանումներին՝ նրանց կարծիքներին ծանոթանալու նպատակով: Յուրաքանչյուր ստորաբաժանման ղեկավար Որակի ապահովման կենտրոն է ներկայացրել համապատասխան դիտարկումներ ու առաջարկություններ: Նախագծային տարբերակը երկու անգամ քննարկվել է նաև Ակադեմիայի ռեկտորի և պրոռեկտորների հետ:

2019-2024 թթ. ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ծրագիրը հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ (արձանագրություն № 2), կենսագործվել է ռեկտորի 2020 թվականի մարտի 2-ի № 51/1-Ա հրամանով:

Նախանշված **վեց նպատակի** իրականացման համար Ակադեմիան պլանավորել է լուծել **47 խնդիր և իրականացնել 99 միջոցառում**՝ նպատակաուղղված Ակադեմիայում որակյալ կրթության ապահովմանը, արդիական հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ֆինանսական կայունությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, Ակադեմիայի միջազգայնացմանը:

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐ	ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔԱՆԱԿ	ՄԻՋՈՑՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿ
ՆՊԱՏԱԿ 1. Ուսուցման որակի մշակույթի ամրապնդում և կրեդիտային համակարգի կայացում Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան՝ բարձրագույն կրթության համակարգում	7	17
ՆՊԱՏԱԿ 2. Լրացուցիչ և շարունակական կրթության զարգացում	11	14
ՆՊԱՏԱԿ 3. Գիտական հետազոտությունների արդյունքների ներդրման բարձրացում և հետազոտություններում շահառուների մասնակցության ընդլայնում	6	14
ՆՊԱՏԱԿ 4. Կառավարման արդյունավետության բարձրացում, կորպորատիվ մշակույթի բարելավում,	9	27

համագործակցային միջավայրի և անձնակազմի մասնագիտական որակների զարգացում		
ՆՊՍՏԱԿ 5. Ֆինանսական կայունության և կառավարման արդյունավետության բարձրացում	7	15
ՆՊՍՏԱԿ 6. Միջազգայնացման գործընթացի և միջազգային համագործակցության ընդլայնում և արդյունավետության բարձրացում	7	12
	47	99

Ակադեմիայի 2019-2024թթ. ռազմավարական ծրագրում սահմանված ռազմավարական խնդիրների և գործողությունների թվային տվյալները՝ ըստ ռազմավարական նպատակների

2020 թվականին մեկնարկած ռազմավարական ծրագրով սահմանված խնդիրների ու նպատակների իրականացման ուղղությամբ աշխատանքները կատարվում են ժամանակացույցին համապատասխան: Անցած ժամանակահատվածում մի շարք գործողություններ իրականացվել են սահմանված ժամկետում, որոշ գործողություններ շարունակական բնույթ ունեն և ընթացքի մեջ են, մի մասն էլ չի իրականացվել կամ թերի է իրականացվել օբյեկտիվ պատճառներով:

Միջոցառումների պատասխանատուների հետ, Ակադեմիայի ռեկտորի գլխավորությամբ, քննարկվել են աշխատանքների ընթացքն ու ծագած խնդիրները:

Ստորև ներկայացնում ենք մինչև 2021 թվականի մարտի 30-ը պլանավորած միջոցառումների իրականացման ընթացքը՝ համապատասխան գործողությունների և միջոցառումների կատարողականով:

2019-2024 թթ. ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների իրականացման հաշվետվողականությունն ապահովելու նպատակով ընդունվել են նոր մոտեցումներ.

- *ցանկացած միջոցառում, որ ներկայացվում է որևէ ստորաբաժանման կողմից, պետք է պարունակի ծրագրի արդյունքների հստակ ձևակերպում, ընդ որում, այդ արդյունքները պետք է լինեն չափելի,*

▪ ստորաբաժանումները կիսամյակային կտրվածքով ներկայացնում են կատարողական հաշվետվություններ, որոնց հիման վրա գնահատվում է նրանց կատարած աշխատանքը:

Որակի ապահովման կենտրոնը պատասխանատու կատարողներին պատշաճ իրազեկել է իրականացվող միջոցառումների ժամկետների մասին, ինչպես նաև 2020 թվականի յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 15-օրյա ժամկետում Ակադեմիայի ռեկտորին է ներկայացրել իրականացված միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն (հիմք՝ Ակադեմիայի ռեկտորի 2020 թվականի մարտի 2-ի № 51/1-Ա հրամանի 2-րդ կետ):

Մշակվել են **2019-2024 թթ.ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների արդյունքների վերաբերյալ հաշվետվության ձևաչափը և լրացման ուղեցույցը:**

2. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ռազմավարական ծրագրի և միջոցառումների ծրագրի առանձին նպատակների, խնդիրների գնահատումը կատարվում է **Ակադեմիայի 2019-2024 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ծրագրի 4.1.2-րդ ենթակետի դրույթների** (2021 թվականի մարտի նիստում) համաձայն:

Գնահատումը կատարվում է հետևյալ տվյալների և տեղեկությունների հիման վրա՝

- ✓ ռազմավարական ծրագրի առանձին միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկություն

- ✓ Ակադեմիայի զարգացման ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ տեղեկություն, արտահայտված տոկոսներով:

- ✓ տարբեր միջոցառումների չկատարման պատճառների վերաբերյալ տեղեկություն՝ հստակ հիմնավորումով:

ՆՊԱՏԱԿ 1. Ուսուցման որակի մշակույթի ամրապնդում և կրեդիտային համակարգի կայացում Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան՝ բարձրագույն կրթության համակարգում, 7 խնդիր և 17 միջոցառում/գործողություն

Կատարված միջոցառում	Չկատարված միջոցառում	Հրատապ միջոցառում	Ընթացքի մեջ միջոցառում
3	0 չկատարված միջոցառում չկա	7	7

ՆՊԱՏԱԿ 1. Ուսուցման որակի մշակույթի ամրապնդում և կրեդիտային համակարգի կայացում Բոլոնիայի գործընթացի պահանջներին համապատասխան՝ բարձրագույն կրթության համակարգում

<p>1.2.1. Բենչմարքինգի (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն) իրականացման քաղաքականության մշակում</p> <p>1.2.3. Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգերի մշակում և հաստատում</p> <p>1.2.8. «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի վերանայում</p>		<p>1.2.2. Կրթական ծրագրերի բարելավման համար բենչմարքինգի կառուցակարգերի և մեթոդաբանության կիրառում</p> <p>1.2.4. Ակադեմիայում կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկման գործընթացի իրականացում</p> <p>1.2.5. Դասախոսական կազմի վերապատրաստում կրթական ծրագրերի վերջնարդյունքների փոխկապակցման, ինչպես նաև դասընթացներին կրեդիտների հատկացման մեթոդաբանության, առարկայական ծրագրի մշակման վերաբերյալ</p> <p>1.3.1. ՈԱՇ-ի 7-րդ մակարդակի պահանջներին համապատասխան լրամշակված և գործածության մեջ դրված մագիստրոսական կրթական ծրագրեր</p> <p>1.4.1. Ամփոփիչ ատեստավորման գործընթացի կատարելագործում, մագիստրոսական</p>	<p>1.1.1. Աշխատաշուկայի հետազոտման մեթոդաբանության մշակում, որը թույլ կտա դուրս բերել ժամանակակից հասարակությանն անհրաժեշտ մասնագիտությունները/կրթական ծրագրերը, ինչպես նաև այդ մասնագետների կոմպետենտությանը ներկայացվող պահանջները</p> <p>1.1.2. Աշխատաշուկայի ուսումնասիրման աղբյուրների որոշում, ինչը թույլ կտա կազմել ուսումնասիրման ոլորտների թիրախները՝ Ակադեմիայի առաքելությանը համապատասխան</p> <p>1.1.3. Աշխատաշուկայում անհրաժեշտ մասնագիտությունների/կրթական ծրագրերի կոմպետենցիաների որոշման նպատակով փորձագետների խմբերի ձևավորում և կոմպետենցիաների ձևակերպում</p> <p>1.2.6. «Բիզնես վարչարարություն» մասնագիտության ներդրում՝ բիզնես վարչարարության մագիստրոսի որակավորմամբ</p> <p>1.2.7. «Բիզնես վարչարարություն» մասնագիտության ներդրում</p> <p>1.5.2. Իրականացնել պրակտիկաների կազմակերպման մշտադիտարկում ու գնահատում</p> <p>1.7.1. Տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառում կրթական գործընթացում</p>
---	--	---	---


		<p>թեզերի գնահատման հստակ չափանիշներ</p> <p>1.5.1. Պրակտիկաներին առնչվող կարգերի և գործընթացների վերանայում՝ ներառյալ դրանց կազմակերպման ձևերը, տևողությունն ու բովանդակությունը՝ տարբերակելով ըստ ՄԿԾ-ների</p> <p>1.6.1. Ստեղծել ժամկետների նկարագրությամբ ուղեցույցներ ուսանողների և դիմորդների համար՝ ՄԿԾ-ների, մուտքային և ելքային պահանջների, սովորողների իրավունքների ու պարտականությունների, զեղչային համակարգի, ուսանողական կյանքի, աշխատանքային ապագա հնարավորությունների մասին</p>	
--	--	--	--

ԽՆԴԻՐ 1.2. Կրթական ծրագրերի վերանայում՝ աշխատաշուկայի կարիքներին համապատասխան	
Նախադրե սված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
1.2.1. Բենչմարքինգի (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն) իրականացման քաղաքականության մշակում	Մշակվել և հաստատվել է « Բենչմարքինգի (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն) իրագործման ընթացակարգը » https://paara.am/wp-content/uploads/2012/05/3-To-Gayane_Բենչմարքինգ.pdf Հաստատված է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի ապրիլի 29-ի նիստում (արձանագրություն N° 5), Ռեկտորի 2020 թվականի ապրիլի 30-ի N 82-Ա հրաման
1.2.3. Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգերի մշակում և հաստատում	Մշակվել և հաստատվել են « Կրթական ծրագրերի մշտադիտարկման, կրթական ծրագրերի պարբերական վերանայման և վերահաստատման կարգերը » Գիտական խորհրդի 2020 թվականի ապրիլի 29-ի նիստում (արձանագրություն N° 5), Ռեկտորի 2020 թվականի ապրիլի 30-ի N 80-Ա հրաման
1.2.6. «Բիզնես վարչարարություն» մասնագիտության ներդրում՝ բիզնես վարչարարության մագիստրոսի որակավորմամբ	Մշակվել է նոր մասնագիտության/կրթական ծրագրի (մագիստրոս) ներմուծման հայտը Կառավարման ամբիոնի կողմից՝ ըստ սահմանված ընթացակարգի

<p>1.2.8. «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ուսումնական պլանի և առարկայական ծրագրերի վերանայում</p> <p>Գործատուների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացման խթանում՝ շրջանավարտների զբաղվածության թիրախավորմամբ</p>	<p>Պատրաստվել է ուսումնական պլանի նախագիծը, քննարկվել է Կառավարման ամբիոնի 2020 թվականի մայիսի նիստում</p> <p>«Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով հեռավար ուսուցմամբ սովորում է 60 մագիստրանտ: Ակադեմիայի և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի համատեղ դիպլոմի շնորհմամբ հեռավար ուսուցմամբ մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով սովորում է 27 մագիստրանտ, իսկ միայն Ակադեմիայում հեռավար ուսուցմամբ մագիստրատուրայի «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով՝ 30 մագիստրանտ:</p> <p>2020 թ. լրացավ փորձնական (պիլոտային)՝ 3 տարի ժամկետով, մագիստրոսի կրթական ծրագրով, հեռավար ուսուցմամբ՝ 041301.007-«Կառավարում» (041301.04.7- «Գործարար վարչարարություն (կառավարում)») մասնագիտության գծով կրթական գործունեության թույլտվության ժամկետը, որն առաջ բերեց կոնկրետ քայլերի մշակման և իրականացման անհրաժեշտություն.</p> <p>✚ Ակադեմիայի տեղեկատվական համակարգերի և սպասարկման բաժնի աջակցությամբ lms.paara.am կայքում ներդրվել է հեռավար ուսուցման MOODLE հարթակը:</p> <p>✚ Հաշվի առնելով նախորդ տարիների փորձը և ուսանողների հարցումների արդյունքները՝ 2020 թ. ապրիլին Ակադեմիայի գիտական խորհրդի նիստում հաստատվել է «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի նոր ուսումնական պլանը, որին համապատասխան՝ հեռավար ուսուցման հարթակում ստեղծվել է 23 դասընթաց:</p> <p>✚ Հեռավար ուսուցմամբ «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման համար «Հեռավար ուսուցման դասավանդման հմտություններ (MOODLE ծրագիր)» վերապատրաստման դասընթացի շրջանակներում վերապատրաստվել է 10 դասախոս:</p> <p>✚ Մշակվել և Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի հունվարի 30-ի նիստում (Արձանագրություն N° 1) հաստատվել է ««Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հեռավար ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը:»</p> <p>✚ Ներկայացված լիցենզիայի փաթեթի հիման վրա ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հուլիսի 21-ի N 924 Ա/2 հրամանով «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ը մագիստրոսի կրթական ծրագրով հեռավար ուսուցմամբ՝ 041301.00.7- «Կառավարում» (041301.04.7 - «Գործարար վարչարարություն (կառավարում)») մասնագիտության գծով կրթական գործունեության թույլտվություն է ստացել:</p> <p>Ընդունելության արդյունքների հիման վրա «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրով մագիստրատուրա է ընդունվել 30 հոգի: Հարկ ենք համարում նշել, որ ուսանողների մեծ մասը ՀՀ տարբեր մարզերից և Արցախից են:</p>
---	---

	<p>«Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագիրը վերակառուցվել է՝ նույնականացնելով ուսումնական պլանները առկա և հեռավար ձևով սովորողների համար:</p>
<p>ԽՆԴԻՐ 1.3. Կրթական և գիտական գործընթացների ինտեգրում</p>	
<p>Նախադրված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>1.3.1. ՈԱՇ-ի 7-րդ մակարդակի պահանջներին համապատասխան լրամշակված և գործածության մեջ դրված մագիստրոսական կրթական ծրագրեր</p> <p>Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման միջազգային փորձը, ՄԿԾ-ներում ներդնել սովորողների հետազոտական ու նորարարական կարողությունների զարգացմանը նպատակաուղղված դասընթացներ կրթական տարբեր մակարդակներում</p>	<p>Իրավագիտության ամբիոնի 2020 թվականի փետրվարի 28-ի նիստում քննարկվել են՝</p> <p>1. Իրավագիտության ամբիոնի մագիստրատուրայի առկա ուսուցման 1925 թողարկման «Իրավագիտություն» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության և դրանց իրականացման գործընթացը:</p> <p>2. Իրավագիտության ամբիոնի մագիստրատուրայի հեռակա ուսուցման 1721 թողարկման «Իրավագիտություն» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի ավարտական փուլի ընթացքը:</p> <p>Իրավագիտության ամբիոնի 2020 թվականի ապրիլի 2-ի նիստում քննարկվել են՝</p> <p>1. Իրավագիտության ամբիոնի մագիստրատուրայի առկա ուսուցման 1824 թողարկման «Իրավագիտություն» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի և դրանց վերաբերյալ կարծիքների Ակադեմիայի իրավագիտության ամբիոն հանձնելու գործընթացի կազմակերպման հարցերը:</p> <p>2. Իրավագիտության ամբիոնի մագիստրատուրայի առկա ուսուցման 1824 թողարկման «Իրավագիտություն» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի գրախոսման կազմակերպման և դրանց իրականացման գործընթացը:</p> <p>Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնը մշակել ու ներկայացրել է մագիստրոսական թեզի թեմաների նորացված ցանկ: Մագիստրոսական թեզի թեմաները կազմելիս հիմնվել են արդի տարածաշրջանային ու գլոբալ քաղաքական զարգացումների վրա՝ արդիականությունը ապահովելու համար: Մագիստրոսական թեզի թեմաները մշակվել և փոփոխվել են ամբիոնի դասախոսների հետ համատեղ:</p> <p>Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնը մշակել և ներկայացրել է «Խարիզմատիկ լիդերության քաղաքակրթական չափումները» վերտառմամբ ծրագիր: Ամբիոնի գիտահետազոտական ուսումնասիրությունների շրջանակում են քաղաքական արդիականացումը, քաղաքական էլիտան, քաղաքական գործընթացները:</p> <p>Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի կողմից վերանայվել են առարկայական ծրագրերը և հարցաշարերը:</p> <p>Կառավարման հոգեբանության ամբիոնի դասախոսների կողմից նախապես ներկայացված մագիստրոսական թեզի թեմաների վերլուծության շնորհիվ կազմվել և հաստատվել է ցանկ ու տրամադրվել մագիստրանտներին: Նրանք ընտրել են 3 թեմա, որպեսզի համընկնման դեպքում լինի ընտրության հնարավորություն և ըստ մասնագիտական ուղղվածության առաջարկվել են</p>

	<p>ղեկավարներ: Ղեկավարների և մագիստրանտների հաղիպումներից հետո վերջնական կազմվել է մագիստրանտների և ղեկավարների ցուցակ ու ներկայացվել հաստատման: Բոլոր մագիստրոսական թեզերը բաղկացած են տեսական վերլուծական, ինքնուրույն, փորձարական և գործնական առաջարկություններից:</p>
<p>ԽՆԴԻՐ 1.4. Վերջնարդյունքների հստակեցմանը միտված կրթական ծրագրերի լրամշակում</p>	
<p>Նախադեսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>1.4.1. Ամփոփիչ ատեստավորման գործընթացի կատարելագործում, մագիստրոսական թեզերի գնահատման հստակ չափանիշների սահմանում՝ նորարարական, հետազոտական, ստեղծագործական, վերլուծական և տեխնիկական բաղադրիչների համար, սովորողների կողմից ձեռք բերված կրթական վերջնարդյունքների և ՄԿԾ-ներում պլանավորված վերջնարդյունքների համապատասխանության օբյեկտիվ գնահատում, եզրահանգումների կատարում</p>	<p>Կառավարման ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Մշակվել և քննարկման փուլում է գտնվում «Մագիստրոսական թեզերի թեմաների կազմման, բաշխման, կատարման և վերահսկողության մեխանիզմների» նախագիծը, ինչպես նաև 40-ից ավելի վերահսկողության հաջորդական քայլերի սխեման: 2. Ամփոփիչ ատեստավորման հեռավար կազմակերպման ժամանակ ևս մշակվել են նորարարական մոտեցումներն գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար (գրախոսականների դիտողությունների կցում պրեզենտացիաներին և այլն): Գրախոսը և գիտական ղեկավարը ևս առցանց մասնակցության հնարավորություն են ունեցել: <p>Կառավարման հոգեբանության ամբիոնը ուշադրություն է դարձրել մագիստրոսական թեզի նախնական պաշտպանության փուլին: Առանձին ուշադրություն է դարձվել ելույթների բովանդակությանը, ժամանակին և հարց ու պատասխաններին: Պաշտպանությունից հետո հարցում է կատարվում մագիստրանտների հետ, որը որպես հետադարձ կապ, թույլ է տալիս ապագայում հաշվի առնել փորձը:</p>
<p>ԽՆԴԻՐ 1.5. Մագիստրոսական կրթության և պրակտիկայի ինտեգրում</p>	
<p>Նախադեսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>1.5.1. Պրակտիկաներին առնչվող կարգերի և գործընթացների վերանայում՝ ներառյալ դրանց կազմակերպման ձևերը, տևողությունն ու բովանդակությունը՝ տարբերակելով ըստ ՄԿԾ-ների</p>	<p>Իրավագիտության ամբիոն. Նոր Covid 19 կորոնավիրուսային համավարակով պայմանավորված արտակարգ դրության ընթացքում ստեղծված իրադրությունը խոչընդոտեց նաև առկա ուսուցման 1925 թողարկման մագիստրանտների կառավարչական պրակտիկայի կազմակերպմանը: Առցանց առանձին քննարկումներ կազմակերպվեց ամբիոնի դասախոսների և մագիստրանտների հետ, որոշվեց պրակտիկան կազմակերպել հաջորդ կիսամյակ, որպեսզի չտուժի գործընթացի արդյունավետությունը:</p>
<p>1.5.2. Իրականացնել պրակտիկաների կազմակերպման մշտադիտարկում ու գնահատում</p>	<p>Հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները, ուսանողների նախասիրությունները, ինչպես նաև ամբիոնների կողմից ներկայացված առաջարկությունները՝ կնքվել են նոր պայմանագրեր, ինչի արդյունքում ընդլայնվել է մասնագիտական պրակտիկայի անցկացման աշխարհագրությունը: Ընդլայնվել և բազմազանեցվել է ուսանողների պրակտիկայի հնարավորությունները և վայրերը:</p>



2018-2018 ուս.տարի 2019-2020 ուս.տարի 2020-2021 ուս.տարի

ԽՆԴԻՐ 1.6. Վերջնարդյունքների ձեռքբերման և գնահատման միջև կապի ապահովում՝ համակողմանի և օբյեկտիվ գնահատման համակարգի ու կառուցակարգերի ներդրմամբ

Նախադրված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
-------------------------	-----------------------------------

1.6.1. Ստեղծել ժամկետների նկարագրությամբ ուղեցույցներ ուսանողների և դիմորդների համար՝ ՄԿԾ-ների, մուտքային և ելքային պահանջների, սովորողների իրավունքների ու պարտականությունների, գեղչային համակարգի, ուսանողական կյանքի, աշխատանքային ապագա հնարավորությունների մասին Ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման հստակ կառուցակարգերի մշակում

Կրթության որակի կարևոր ցուցանիշ է կրթական ծրագրերից շահառուների բավարարվածության աստիճանը:
Կրթության որակի խնդիրների բացահայտման և մատուցվող ծառայություններից բավարարվածության աստիճանը գնահատելու նպատակով իրականացվել են **հարցումներ**, մասնավորապես՝

- 2019-2020 թթ. ուսումնական տարվա **առաջին կիսամյակում մագիստրանտների շրջանում սոցիոլոգիական հարցում**
- 2019-2020 թթ. ուսումնական տարվա **առաջին կիսամյակում հեռավար ուսուցմամբ** սովորողների շրջանում անցկացված հարցում
- 2019-2020 թթ. ուսումնական տարվա **երկրորդ կիսամյակում մագիստրանտների շրջանում սոցիոլոգիական հարցում՝ դասախոսներից և ուսուցանվող դասընթացներից բավարարվածության աստիճանը գնահատելու համար**

Ստեղծված իրավիճակում, որը կապված է կորոնավիրուսով վարակվելու բարձր ռիսկի հետ, բուժերի արտաքին մարտահրավերին միակ հնարավոր և համարժեք պատասխանը ժամանակավոր ամբողջական անցումն էր առցանց ուսուցման: Այս պայմաններում համալսարանների հնարավոր բոլոր ռեսուրսներն օգտագործվել են համացանցի միջոցով ուսումնական գործընթաց իրականացնելու համար: Ուստի առցանց ուսուցման հարկադրված անցումը գնահատելու համար Ակադեմիայում կարևորվեց համապատասխան հարցում իրականացնելը:

- **2019-2020 թթ.ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում հեռավար ուսուցմամբ ուսանողների շրջանում անցկացված հարցում**
- **Դասախոսների շրջանում 2020 թվականին անցկացված հարցում**
- **2019-2020 թթ. ուսումնական տարվա շրջանավարտների շրջանում անցկացված հարցում**
- **2020-2021 թթ. ուսումնական տարվա առաջին կիսամյակում առկա ուսուցմամբ ուսանողների շրջանում անցկացված հարցում**

	<p>➤ 2020-2021 թթ. ուսումնական տարվա առաջին կիսամյակում հեռակա ուսուցմամբ ուսանողների շրջանում անցկացված հարցում</p> <p>➤ 2020-2021 թթ. ուսումնական տարվա առաջին կիսամյակում հեռավար ուսուցմամբ ուսանողների շրջանում անցկացված հարցում</p> <p>Հարցումների արդյունքներն ամփոփվել են Որակի ապահովման կենտրոնի կողմից, քննարկվել Ակադեմիայի գիտական խորհրդի և ամբիոնների նիստերում, ներկայացվել են առանցքային շահակիցներին:</p> <p>2.Ուսանողական խորհուրդի սոցիալ-իրավական հանձնաժողովի կողմից կազմակերպված իրազեկման միջոցառում. Ուսանողների իրավունքների և նոր գնահատման կարգի իրազեկում.</p> <p>Առաջին կուրսեցիներին հանագամանալից ներկայացվեցին՝ իրենց իրավունքները, զեղչման համակարգը, ռոտացիայի սկզբունքները, գնահատման համակարգը, բողոքարկման ընթացակարգը, https://www.facebook.com/664007860290402/posts/2800352156655951/?d=n</p>
--	---

ԽՆԴԻՐ 1.7. Նորարարական տեխնոլոգիաների ներդրում կրթական գործընթացում

Նախադրված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>1.7.1. Տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառում կրթական գործընթացում</p> <p>Ակադեմիայում գործող էլեկտրոնային ուսուցման և սովորողների թեստավորման հարթակների ուսումնամեթոդական նյութերի բարելավում և նոր նյութերով համալրում, միաժամանակ նոր էլեկտրոնային համակարգ(եր)ի՝ ՄԿԾ-ների, ուսումնական պլանների ու մոդուլների, տարաբնույթ ուսումնական նյութերի շահագործում՝ դասախոսությունների առցանց մատուցման և սովորողների գնահատման նպատակով</p>	<p>Հեռավար ուսուցման գործընթացի ապահովում հարթակների սերվերային համակարգերի արդյունավետ և օպերատիվ կառավարման շնորհիվ:</p> <p>Համավարակի պայմաններում ուսումնական պրոցեսը անխափան կազմակերպում է հեռավար ձևաչափով՝ Google G Suite համակարգի միջոցով:</p> <p>Հեռավար, առցանց դասերի կազմակերպման համար ուսումնամեթոդական վարչությանը ցուցաբերվել է անհրաժեշտ տեխնիկական օժանդակություն՝ հեռավար, առցանց դասերը ըստ դասացուցակի կազմակերպելու համար: Դասախոսներին և ուսանողներին տրամադրվել է անհրաժեշտ տեխնիկական աջակցություն՝ առցանց դասերին միանալու համար:</p> <p>Կատարվել են տեսակոնֆերանսների կազմակերպման և ծայնագրման համար նախատեսված Webinar նոր համակարգի տեղադրման և հեռավար ուսուցման Moodle հարթակի արդյունավետ և օպերատիվ կառավարման աշխատանքներ:</p> <p>Հեռավար ուսուցումն ավելի մատչելի դարձնելու համար ամբողջությամբ փոփոխվել է հեռավար ուսուցման կառավարման Moodle հարթակի միջերեսը:</p>

ՆՊԱՏԱԿ 2. Լրացուցիչ և շարունակական կրթության զարգացում, 11 խնդիր և 14 միջոցառում/գործողություն


Կատարված միջոցառում	Զկատարված միջոցառում	Հրատապ միջոցառում	Ընթացքի մեջ միջոցառում
4	2	5	3
ՆՊԱՏԱԿ 2. Լրացուցիչ և շարունակական կրթության զարգացում			
<p>2.1.1. Վերապատրաստման դասընթացները ակտիվ և ինտերակտիվ մեթոդներով ու ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների (նյութատեխնիկական բազա, դասախոսական կազմ, մոկտիմեդիա ռեսուրսներ, հեռավար կրթության հնարավորություններ և այլն) ուսումնասիրություն</p> <p>2.6.2. Վերապատրաստման ծառայությունների գնման մրցույթի մասնակցության հայտերի պատրաստում և ներկայացում</p> <p>2.8.1. Հանրային ծառայողների վերապատրաստման դասընթացների իրականացում նոր ձևաչափով՝ հեռավար ուսուցման կիրառմամբ</p> <p>2.9.1. Աջակցություն քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներում /Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից նման առաջարկ ստանալու դեպքում/</p>	<p>2.2.1. Լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարություն/հայեցակարգ Հնարավոր մարտահրավերների և խոչընդոտների նախանշում, վերապատրաստման արդյունավետ իրականացման համար առկա խնդիրների բացահայտում ունկնդիրներին, համապատասխան մարմինների պատասխանատու ներկայացուցիչներին տրվող հարցաթերթերի միջոցով</p> <p>2.3.1. Լրացուցիչ և շարունակական կրթության պահանջարկի մշտադիտարկում՝ ճշգրտելու առավել պահանջարկված դասընթացների ցանկը և համադրելու այն Ակադեմիայի մասնագիտական ներուժի ընձեռած հնարավորությունների հետ, 2021 թ. ապրիլի 2-րդ տասնօրյակ</p>	<p>2.3.2. Հանդիպումների կազմակերպում պետական, ոչ պետական կազմակերպությունների և բիզնեսի ներկայացուցիչների հետ՝ բացահայտելու աշխատաշուկայի պահանջարկը որոշելու նպատակով</p> <p>2.4.1. Աշխատաշուկայի ուսումնասիրություն և կարիքների բացահայտում Հարցումների կազմակերպում, այդ թվում՝ սոցիալական ցանցերի միջոցով</p> <p>2.5.2. Հեռավար կրթության բաց հարթակի ստեղծում շահառուների լայն շրջանակների համար՝ շարունակական կրթության հնարավորությունն ապահովելու նպատակով</p> <p>2.6.1. Լրացուցիչ կրթության պահանջարկի ուսումնասիրություն՝ ըստ թիրախային խմբերի</p>	<p>2.5.1. Ակադեմիայի լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի զարգացում և ընդլայնում՝ Ակադեմիան դարձնելով այդ առումով արդյունավետ և տնտեսապես շահավետ կառույց</p> <p>2.10.1. Ըստ ղեկավար և մասնագիտական պաշտոնների՝ անհրաժեշտ կոմպետենցիաների մշակում, որոնք ձեռք կբերվեն համապատասխան թեմաներով վերապատրաստման միջոցով /Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից նման առաջարկ ստանալու դեպքում/</p> <p>2.11.1. Վերապատրաստման գործընթացի նպատակադրված արդյունքների կառավարման մեթոդի ներդրում, որը կապահովի որոշակի կանխատեսելի վերջնարդյունքներ</p>

		<p>Գործընկերային կապերի հաստատում՝ վերապատրաստման իրականացմանը խանգարող հանգամանքների վերացումով, արդյունավետ վերապատրաստման համար նախադրյալների ստեղծում</p> <p>2.7.1. Հանրային ծառայողների վերապատրաստման կարիքների բացահայտման, դասընթացների արդյունքների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման համար համապատասխան գործիքակազմի ստեղծում</p>	
--	--	--	--

ԽՆԴԻՐ 2.1. Վերապատրաստման դասընթացների իրականացման համար Ակադեմիայի առկա ռեսուրսների գնահատում	
<i>Նախադրեալած գործողություն</i>	<i>Իրականացված գործողության արդյունք</i>
<p>2.1.1. Վերապատրաստման դասընթացները ակտիվ և ինտերակտիվ մեթոդներով ու ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսների (նյութատեխնիկական բազա, դասախոսական կազմ, մուլտիմեդիա ռեսուրսներ, հեռավար կրթության հնարավորություններ և այլն) ուսումնասիրություն</p>	<p>2020 թվականին Ակադեմիայի կողմից իրականացվել է 4078 ունկնդրի վերապատրաստման դասընթացներ (2019 թվականին՝ 2416, 2018-ին՝ 2151, 2017-ին՝ 727, իսկ 2016-ին՝ 665):</p> <p>2020 թվականի սեպտեմբերի 14-ից դեկտեմբերի 21-ը իրականացվել է 3786 քաղաքացիական ծառայողների վերապատրաստում հեռավար ուսուցման համակարգով (Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման էլեկտրոնային դասընթացների MOODLE համակարգ):</p> <p>Ձևավորվել է համապատասխան դասախոսական կազմ յուրաքանչյուր ծրագրի համար և մշակվել դասընթացների մոդուլներ՝ ըստ տեխնիկական բնութագրի՝ 20-40 էջի սահմաններում: Վերապատրաստումները կատարվել են ստորև նշված ծրագրերով.</p> <p><i>Խնդրի լուծում</i> <i>Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն</i> <i>Հաշվեքվությունների մշակում</i> <i>Փաստաթղթերի նախապատրաստում</i> <i>Ժամանակի կառավարում</i> <i>Որոշումների կայացում</i></p>

	<p>Բարելարքություն Կոնֆլիկտների կառավարում Բողոքների բավարարում Ծառայությունների մատուցում</p>
<p>ԽՆԴԻՐ 2.2. Հնարավոր մարտահրավերների և խոչընդոտների նախանշում, վերապատրաստման արդյունավետ իրականացման համար առկա խնդիրների, դասընթացների կազմակերպման հիմնական ուղղությունների և սկզբունքների որոշում</p>	
<p>Նախադրված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>2.2.1. Հնարավոր մարտահրավերների և խոչընդոտների նախանշում, վերապատրաստման արդյունավետ իրականացման համար առկա խնդիրների բացահայտում ունկնդիրներին, համապատասխան մարմինների պատասխանատու ներկայացուցիչներին տրվող հարցաթերթերի միջոցով</p> <p>Վերապատրաստման մշտադիտարկման և արդյունավետության գնահատման իրականացման կառուցակարգերի սահմանում</p>	<p>«Լրացուցիչ և շարունակական կրթության ուղղակիություն/հայեցակարգ» չի հաստատվել:</p>
<p>ԽՆԴԻՐ 2.3. Հանրային և մասնավոր հատվածներում կարճաժամկետ ու երկարաժամկետ վերապատրաստման դասընթացների պահանջարկի ուսումնասիրություն</p>	
<p>Նախադրված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>2.3.1. Լրացուցիչ և շարունակական կրթության պահանջարկի մշտադիտարկում՝ ճշգրտելու առավել պահանջարկված դասընթացների ցանկը և համադրելու այն Ակադեմիայի մասնագիտական ներուժի ընձեռած հնարավորությունների հետ</p> <p>Պահանջարկի ուսումնասիրություն հանրային ծառայողների, համապատասխան մարմինների պատասխանատու ներկայացուցիչների և այլ շահառուների շրջանում անցկացվող հարցումների միջոցով</p>	<p>Աշխատաշուկայում մասնագետներին ներկայացվող պահանջների փոփոխությունները, լրացուցիչ կրթական ծրագրերի որակի ապահովումը և վերապատրաստող հաստատությունների մրցակցությունը անհրաժեշտ են դարձնում Ակադեմիայում գործող լրացուցիչ կրթական ծրագրերի պարբերական նորացումը:</p> <p>Մշտադիտարկման արդյունքում ամբողջությամբ կամ մասնակիորեն լրամշակվել են լրացուցիչ կրթական ծրագրերը՝ և՛ բովանդակային, և՛ կադրային ապահովման առումով:</p> <p>Ներդրված լրացուցիչ կրթության ծառայությունների և դասընթացների նոր ցանկ, որը հասանելի է մասնագիտական կատարելագործման և վերապատրաստման կարիք ունեցող բոլոր ցանկացողներին (այդ թվում՝ համագործակցություն հիմնական շահառուների հետ՝ հանրային ծառայողներ, Ակադեմիայի շրջանավարտներ, գործատուներ)</p>
<p>2.3.2. Հանդիպումների կազմակերպում պետական, ոչ պետական</p>	<p>Համաձայն Ակադեմիայի ղեկավարի 2020 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում կարճաժամկետ թեմատիկ վերապատրաստումների</p>

<p>կազմակերպությունների և բիզնեսի ներկայացուցիչների հետ՝ բացահայտելու աշխատաշուկայի պահանջարկը որոշելու նպատակով</p> <p>Նախաձեռնություն՝ ուղղված առանձին կազմակերպությունների մասնագետների նպատակային վերապատրաստմանը, պայմանագրային կապերի ձևավորմանը</p>	<p>ծրագրերի ցանկը և նախահաշիվը հաստատելու մասին» № 9-Ա հրամանի՝ 2020 թվականի հունիսի 16-23-ն իրականացվել է 8 ունկնդրի վճարովի կարճաժամկետ թեմատիկ վերապատրաստում «Գնումների գործընթացի կազմակերպում» ծրագրով (16 ժամ):</p> <p>2021 թվականի փետրվարին իրականացվել է վճարովի կարճաժամկետ թեմատիկ վերապատրաստում «Մարդկային ռեսուրսների կառավարում» ծրագրով</p>
<p>ԽՆԴԻՐ 2.4. Ակադեմիայի կողմից մատուցվող վերապատրաստման դասընթացների վերջնարդյունքների համապատասխանեցում պահանջարկին</p>	
<p>Նախադրեւսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>2.4.1. Աշխատաշուկայի ուսումնասիրություն և կարիքների բացահայտում</p> <p>Հարցումների կազմակերպում, այդ թվում՝ սոցիալական ցանցերի միջոցով</p>	<p>Համաձայն Ակադեմիայի ռեկտորի 2020 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում կարճաժամկետ թեմատիկ վերապատրաստումների ծրագրերի ցանկը և նախահաշիվը հաստատելու մասին» № 9-Ա հրամանի՝ 2020 թվականի հունիսի 16-23-ն իրականացվել է 8 ունկնդրի վճարովի կարճաժամկետ թեմատիկ վերապատրաստում «Գնումների գործընթացի կազմակերպում» ծրագրով (16 ժամ):</p> <p>2021 թվականի փետրվարին իրականացվել է վճարովի կարճաժամկետ թեմատիկ վերապատրաստում «Մարդկային ռեսուրսների կառավարում» ծրագրով</p>
<p>ԽՆԴԻՐ 2.5. Շարունակական կրթության համակարգավածություն ու հասանելիություն՝ շահառուների (տարիքային բոլոր խմբերի համար՝ երիտասարդներ, մեծահասակներ) անընդմեջ կրթության միջոցով</p>	
<p>Նախադրեւսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>2.5.2. Հեռավար կրթության բաց հարթակի ստեղծում շահառուների լայն շրջանակների համար՝ շարունակական կրթության հնարավորությունն ապահովելու նպատակով</p>	<p>Համաձայն Ակադեմիայի ռեկտորի 2020 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում կարճաժամկետ թեմատիկ վերապատրաստումների ծրագրերի ցանկը և նախահաշիվը հաստատելու մասին» № 9-Ա հրամանի՝ 2020 թվականի հունիսի 16-23-ն իրականացվել է 8 ունկնդրի վճարովի կարճաժամկետ թեմատիկ վերապատրաստում «Գնումների գործընթացի կազմակերպում» ծրագրով (16 ժամ):</p>
<p>ԽՆԴԻՐ 2.6. Ակադեմիայում հանրային ծառայողների վերապատրաստումն արդյունավետ իրականացնելու համար իրական նախադրյալների ստեղծում</p>	
<p>Նախադրեւսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>2.6.2. Վերապատրաստման ծառայությունների գնման մրցույթի մասնակցության հայտերի պատրաստում և ներկայացում</p>	<p>Սահմանված կարգով պատրաստվել և ներկայացվել են հայտեր վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգերին մասնակցելու նպատակով: Արդյունքում Ակադեմիան մասնակցել է հաղթող է ճանաչվել:</p> <p>Վարչապետի աշխատակազմի և Ակադեմիայի միջև կնքված «Պետության կարիքների համար աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման» 14.08.2020 թ. № ՀՀՎԱ-ԳՀԾԶԲ-20/34-1 պայմանագիր ՀՀ Կոտայքի մարզպետարանի և Ակադեմիայի միջև կնքված «Մասնագիտական վերապատրաստման ծառայությունների պետական գնման» 07.12.2020թ. № ԿՈՏ-ՄԱԾԶԲ-20/13 պայմանագիր</p>

	<p>ՀՀ պաշտպանության նախարարության և Ակադեմիայի միջև կնքված «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման» 12.08.2020թ № «ԳՀԾՁԲ-20-6/2-1» պայմանագիր ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և Ակադեմիայի միջև կնքված «Պետության կարիքների համար վերապատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման» 04.08.2020թ. № ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/18 պայմանագիր</p> <p>Ակադեմիան մասնակցության հայտ է ներկայացրել.</p> <p>1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/10Ծ ծածկագրով տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգին:</p> <p>2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար ՏԿԵՆ-ԳՀԾՁԲ-2021/11Ծ ծածկագրով աշխատակիցների վերապատրաստման հեռավար դասընթացների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգին</p>												
<p>ԽՆԴԻՐ 2.7. Հանրային ծառայողների վերապատրաստման կարիքների բացահայտման, դասընթացների արդյունքների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման, ինչպես նաև հանրային կառավարման ոլորտում իրականացվող քաղաքականության վերաբերյալ որոշումների կայացման գիտական հենքի ստեղծմանը նպաստելը</p>													
<p>Նախատեսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>												
<p>2.7.1. Հանրային ծառայողների վերապատրաստման կարիքների բացահայտման, դասընթացների արդյունքների մշտադիտարկման և արդյունավետության գնահատման համար համապատասխան գործիքակազմի ստեղծում</p> <p>Թիրախավորված վերապատրաստումների իրականացում</p>	<p>2020 թվականին Ակադեմիայի կողմից իրականացվել է 4078 ունկնդրի վերապատրաստման դասընթացներ (2019 թվականին՝ 2416, 2018-ին՝ 2151, 2017-ին՝ 727, իսկ 2016-ին՝ 665):</p>  <table border="1"> <thead> <tr> <th>Year</th> <th>Number of trainees</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>2016 թ.</td> <td>665</td> </tr> <tr> <td>2017 թ.</td> <td>727</td> </tr> <tr> <td>2018 թ.</td> <td>2151</td> </tr> <tr> <td>2019 թ.</td> <td>2416</td> </tr> <tr> <td>2020 թ.</td> <td>4078</td> </tr> </tbody> </table>	Year	Number of trainees	2016 թ.	665	2017 թ.	727	2018 թ.	2151	2019 թ.	2416	2020 թ.	4078
Year	Number of trainees												
2016 թ.	665												
2017 թ.	727												
2018 թ.	2151												
2019 թ.	2416												
2020 թ.	4078												
<p>ԽՆԴԻՐ 2.8. Հեռավար կրթական տեխնոլոգիաների կիրառմամբ վերապատրաստման դասընթացները նոր ձևաչափով կազմակերպելու հնարավորություն</p>													
<p>Նախատեսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>												
<p>2.8.1. Հանրային ծառայողների վերապատրաստման դասընթացների իրականացում նոր ձևաչափով՝ հեռավար ուսուցման կիրառմամբ</p>	<p>Համաձայն Վարչապետի աշխատակազմի և Ակադեմիայի միջև կնքված «Պետության կարիքների համար աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման» 14.08.2020 թ. № ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-20/34-1 պայմանագրի՝ 2020 թվականի սեպտեմբերի 14-ից դեկտեմբերի 21-ը իրականացվել է 3786 քաղաքացիական ծառայողների վերապատրաստում հեռավար ուսուցման համակարգով (Քաղաքացիական ծառայողների</p>												

<p>Հեռավար ուսուցման արդի տեխնոլոգիաների, ՏՀՏ (տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ) ներդրում և կիրառում հանրային ծառայողների վերապատրաստման համակարգում</p>	<p>վերապատրաստման էլեկտրոնային դասընթացների MOODLE համակարգ):</p> <p>Համաձայն ՀՀ Կոտայքի մարզպետարանի և Ակադեմիայի միջև կնքված «Մասնագիտական վերապատրաստման ծառայությունների պետական գնման» 07.12.2020թ. № ԿՈՏ-ՄԱԾՁԲ-20/13 պայմանագրի՝ 2020թ. դեկտեմբերի 8-11-ն իրականացվել է ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակիցների մասնագիտական վերապատրաստում հեռավար ձևաչափով:</p> <p>Վերապատրաստվել է 223 ունկնդիր, վերապատրաստման վեց ծրագրով (96 ժամ):</p> <p>Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության և Ակադեմիայի միջև կնքված «Պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման» 12.08.2020թ № «ԳՀԾՁԲ-20-6/2-1» պայմանագրի՝ իրականացվել է ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի 34 քաղաքացիական ծառայողների վերապատրաստում «Իրավագիտություն», «Անձնակազմի կառավարում», «Համակարգչային հմտություններ» ծրագրերով (72 ժամ):</p> <p>Համաձայն ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի և Ակադեմիայի միջև կնքված «Պետության կարիքների համար վերապատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման» 04.08.2020թ. № ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-20/18 պայմանագրի՝ իրականացվել է Ազգային ժողովի աշխատակազմի 27 պետական ծառայողների վերապատրաստում՝ «Կառավարչական հմտություններ և պետական ծառայություն» ծրագրով:</p>
<p>ԽՆԴԻՐ 2.9. Քաղաքացիական ծառայողների կոմպետենցիաների վերապատրաստման մեթոդաբանության մշակում</p>	
<p>Նախադրված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>2.9.1. Աջակցություն քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներում /Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից նման առաջարկ ստանալու դեպքում/</p>	<p>Համաձայն Վարչապետի աշխատակազմի և Ակադեմիայի միջև կնքված «Պետության կարիքների համար աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման» 14.08.2020 թ. № ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-20/34-1 պայմանագրի՝ 2020 թվականի սեպտեմբերի 14-ից դեկտեմբերի 21-ը իրականացվել է 3786 քաղաքացիական ծառայողների վերապատրաստում հեռավար ուսուցման համակարգով (Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման էլեկտրոնային դասընթացների MOODLE համակարգ):</p>
<p>ԽՆԴԻՐ 2.10. Վերապատրաստման թեմաներում կոմպետենցիաների բաղադատման մեթոդաբանության մշակում՝ ըստ ղեկավար և մասնագիտական պաշտոնների</p>	
<p>Նախադրված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>2.10.1. Ըստ ղեկավար և մասնագիտական պաշտոնների՝ անհրաժեշտ կոմպետենցիաների մշակում, որոնք ձեռք կբերվեն համապատասխան թեմաներով վերապատրաստման միջոցով /Քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից նման առաջարկ ստանալու դեպքում/</p>	<p>2020 թվականի սեպտեմբերի 14-ից դեկտեմբերի 21-ը իրականացվել է 3786 քաղաքացիական ծառայողների վերապատրաստում հեռավար ուսուցման համակարգով (Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման էլեկտրոնային դասընթացների MOODLE համակարգ):</p> <p>Ձևավորվել է համապատասխան դասախոսական կազմ յուրաքանչյուր ծրագրի համար և մշակվել դասընթացների մոդուլներ՝ ըստ տեխնիկական բնութագրի՝ 20-40 էջի սահմաններում: Վերապատրաստումները կատարվել են ստորև նշված ծրագրերով:</p>

	<p>Հեռավար մոդուլներ.</p> <p>Ինդրի լուծում Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն Հաշվետվությունների մշակում Փաստաթղթերի նախապատրաստում Ժամանակի կառավարում Որոշումների կայացում Բարեվարքություն Կոնֆլիկտների կառավարում Բողոքների բավարարում Ծառայությունների մատուցում</p>
--	---

ՆՊԱՏԱԿ 3. Գիտական հետազոտությունների արդյունքների ներդրման բարձրացում և հետազոտություններում շահառուների մասնակցության ընդլայնում, 6 խնդիր և 14 միջոցառում/գործողություն

Կատարված միջոցառում	Չկատարված միջոցառում	Հրատապ միջոցառում	Ընթացքի մեջ միջոցառում
2	0 չկատարված միջոցառում չկա	8	4

ՆՊԱՏԱԿ 3. Գիտական հետազոտությունների արդյունքների ներդրման բարձրացում և հետազոտություններում շահառուների մասնակցության ընդլայնում

<p>3.2.1. Գիտահետազոտական ծրագրերի թվի մեծացում՝ ավելացնելով դրանց ֆինանսավորման ծավալները և բազմազանեցնելով ֆինանսական ներհոսքի աղբյուրները</p> <p>3.3.1. Ակադեմիայի տեղեկատվական հնարավորությունների առավելագույնս օգտագործում հասարակությանն ու գիտական հանրությանը Ակադեմիայում կատարվող հետազոտական և նորամուծական աշխատանքներն ու</p>	<p>3.1.1. Ակադեմիայի ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում՝ ամբիոնների գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և ՀՀ Կառավարության գերակա խնդիրների հաշվառմամբ</p> <p>3.1.3. Հետազոտական աշխատանքների կատարման գործընթացները կանոնակարգող և խթանող ընթացակարգերի և գործիքակազմի մշակում</p> <p>3.2.2. Ասպիրանտուրայում՝ որպես բարձրագույն կրթության 3-րդ աստիճանում, ուսումնական գործընթացի կազմակերպման, սովորողի ակադեմիական առաջընթացի գնահատման ու</p>	<p>3.1.2. Աշխատաշուկայում Ակադեմիայի ուղղություններին համապատասխան հետբուհական կրթություն ստացած շրջանավարտների պահանջարկի ուսումնասիրություն և հետբուհական կրթության շրջանավարտների զբաղվածության մակարդակը</p> <p>3.2.5. Գիտական կադրերի պատրաստման գործում ավանդ ունեցող գիտական ղեկավարների</p>
---	--	---

<p>դրանց արդյունքները ներկայացնելու համար</p>	<p>ատեստավորման և որակի մշտադիտարկման անհրաժեշտ կանոնակարգերի ու ընթացակարգերի սահմանում 3.2.3. Թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների գիտական որակը բարելավող միջոցառումների իրականացում, մասնավորապես՝ ներքին փորձաքննության համար Ակադեմիայի գիտակրթական ստորաբաժանումների պատասխանատվությունը բարձրացնելու և մասնագիտական խորհուրդներն անաչառ ու սկզբունքային մասնագետ-գիտնականներով համալրելու ճանապարհով 3.2.4. Ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի ընդունելության 2021 - 2022 թթ. հեռանկարային պլանի ձևավորում և դրա հիման վրա՝ գիտամանկավարժական կադրերի պատրաստման պետական պատվերի հայտերի պատրաստում՝ ելնելով բացառապես հետազոտական կառույցին հարիր գիտամանկավարժական կազմի ու հետազոտական ներուժի փուլային համալրման, հետազոտական աշխատուժի ձևավորման պահանջներից 3.4.1. Ակադեմիայում կատարվող հետազոտությունների որակի բարձրացում Գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրում, սովորող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեությունը խրախուսող նոր կառուցակարգերի մշակում և գործարկում 3.6.2. Ակադեմիայի գիտահրատարակչական գործունեության,</p>	<p>խրախուսման կառուցակարգերի մշակում և ներդրում 3.5.1. Ասպիրանտուրան ավարտած և թեկնածուական ատենախոսություն պաշտպանածների ներգրավում ուսումնական և գիտական գործունեության մեջ 3.6.1. Հանրապետական և միջազգային հետազոտական ծրագրերում դասախոսական կազմի, մագիստրանտների և ասպիրանտների ներգրավվածության մակարդակի բարձրացում</p>
---	--	--

		<p>հրապարակվող աշխատանքների բարձր որակ ապահովող արդյունավետ մեխանիզմների ներդրում՝ խթանելով հեղինակավոր ամսագրերում Ակադեմիայի սովորողների և աշխատողների աշխատությունների հրապարակման ակտիվությունը</p> <p>3.6.3. Երիտասարդ գիտնականների ներգրավման, խրախուսման և գիտաշխատողի մասնագիտական առաջընթացի գրավչության բարձրացման համար կառուցակարգերի մշակում</p>	
--	--	--	--

ԽՆԴԻՐ 3.1. Ակադեմիայի հետազոտական ներուժի գնահատում	
Նախադրված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>3.1.1. Ակադեմիայի ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում՝ ամբիոնների գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և ՀՀ Կառավարության գերակա խնդիրների հաշվառմամբ</p>	<p>Կառավարման հոգեբանության ամբիոնի կողմից «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գիտահետազոտական լաբորատորիայի շրջանակում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝</p> <ul style="list-style-type: none"> • տարբեր ոլորտի կառավարիչների հոգեբանական որակների բացահայտում (ըստ մասնագիտական բանիմացությունների) և դրանց համապատասխանեցում ու քննարկում ոլորտի փորձագետների հետ, • հոգեբանական որակների համախմբի կազմում ըստ մասնագիտական ոլորտների (հանրային կառավարում, հանրային ֆինանսների կառավարում, քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն, իրավագիտություն, կառավարման հոգեբանություն), այդ որակների գնահատում փորձագիտական հարցման միջոցով, • այդ որակների բացահայտման մեթոդաբանության մշակում, մեթոդիկաների ստեղծում, մեթոդական փաթեթի կազմում, • ընտրված մեթոդներով հոգեբանական որակների համախմբի բացահայտման հետազոտության իրականացում, • իրականացված աշխատանքների հիման վրա մասնագիտական զարգացման խորհրդատվության կազմակերպում (անհատական և խմբային եղանակներով): <p>Ակադեմիայի իրավագիտության և կառավարման ամբիոնի դասախոսները և ասպիրանտները իրականացրել են Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման երաշխավորված հետևյալ գիտական թեմաները, (2018-2020 թթ.)</p> <p>✚ 18T-5E130 «Խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները» գիտական թեմա</p>

Հետազոտական ծրագրի նպատակն է համալիր վերլուծության միջոցով ուսումնասիրել կառավարման խորհրդարանական ձևի հիմնական հատկանիշները: Արդյունքում, պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական կառավարման ձևի անցմամբ, վեր հանել կառավարման խորհրդարանական ձևի հայաստանյան մոդելի արդի հիմնախնդիրները և առաջարկել դրանց գիտականորեն հիմնավորված լուծումներ:

Հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է **9 գիտական հոդված և «խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները» կոլեկտիվ մենագրությունը:**

19T-5B11 «Հայաստանյան գիտահետազոտական ենթակառուցվածքների (ԳԵ) տնտեսական ազդեցության գնահատման մեթոդաբանության մշակումը (ՔԵՆԴԼ ՍՀԻ օրինակով)» գիտական թեմա

Ծրագրի հիմնական նպատակն է հայաստանյան գիտահետազոտական ենթակառուցվածքների սոցիալ-տնտեսական գնահատման համար կիրառելի միասնական մեթոդաբանական հենքի մշակումը՝ հիմնվելով առկա միջազգային փորձի, կիրառվող մեթոդաբանական մոտեցումների, ՀՀ-ում ԳԵ-մասնավոր համագործակցության արդի վիճակի և հեռանկարների, ինչպես նաև այդ ոլորտում համապատասխան պետական քաղաքականության վերլուծության վրա: Նշված նպատակին հասնելու համար կիրառվել է հետազոտական հարուստ գործիքակազմ, որը ներառել է ինչպես տեսական, այնպես էլ էմպիրիկ մեթոդներ: Ծրագրի արդյունքում մշակվել են ՀՀ ԳԵ-ների սոցիալ-տնտեսական գնահատման համար կիրառելի միասնական մեթոդաբանական ցուցումներ/հիմքեր, որոնք կիրառելի դարձնելու համար նպատակահարմար է գտնվել այլ շահակիցների ներգրավումը՝ գիտական ենթակառուցվածքների հետագա կատարելագործման ու ամբողջացման նպատակով:

Հետազոտական ծրագրի շրջանակում հրատարակվել է 3 գիտական հոդված:

2020 թվականի սեպտեմբերի 7-11-ը Ակադեմիայի ուսանողական գիտական ընկերությունը **Ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի** հետ համատեղ կազմակերպել էր **աշնանային քաղաքական դպրոց՝ «Հանրային քաղաքականության հիմնախնդիրները Հարավային Կովկասում. մարտահրավերներ-հնարավորություններ» թեմայով, <https://paara.am/hanrayin-qaxaqakanutyay-himnaxndirner/>:**

Աշնանային քաղաքական դպրոցին մասնակցում էին ինչպես Ակադեմիայի, այնպես էլ այլ բուհերի ուսանողներ, ուսանողական գիտական ընկերությունների ներկայացուցիչներ, թեմայով հետաքրքրված այլ անձինք:

Ակադեմիայի ամբիոնի դասախոսները պատրաստել են «Պետական կառավարման էվոլյուցիան հետխորհրդային երկրներում. 1991-2021 թթ.» գիրքը, որը պարունակում է

	<p>վերլուծական ակնարկներ՝ նվիրված 1991թ. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության փլուզումից հետո ստեղծված երկրների պետական կառավարման համակարգերի զարգացմանը:</p> <p>Գիրքը պատրաստվել է տարբեր պետությունների առաջատար փորձագետների կողմից, որոնց թվում են պետական և մունիցիպալ կառավարման համար կադրերի պատրաստման առանցքային ուսումնական հաստատությունների ղեկավարները: Հրատարակությունը նախատեսված է պետական իշխանության մարմինների աշխատակիցների, գիտական աշխատողների, դասախոսների և ուսանողների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հետխորհրդային տարածքի երկրների պետականաշինության արդիական հարցերով:</p> <p>«Պետական կառավարման էվոլյուցիան հետխորհրդային երկրներում. 1991-2021 թթ.» գիրքը գրվել է ՌԴ Նախագահին առընթեր Ռուսաստանի ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ակադեմիայի նախաձեռնությամբ:</p> <p>Գրքի՝ Հայաստանին վերաբերող հատվածը առանձին հոդվածի տեսքով կիրառարակվի «Պետական ծառայություն» (Public Administration) ամսագրում:</p> <p>Նաև ձեռք է բերվում գրքի անգլալեզու տարբերակի հրապարակման համաձայնությունը հեղինակավոր Springer հրատարակչությունում:</p> <p>Գրքի շնորհանդեսը կայացել է Մոսկվայում՝ «Գայդարյան ֆորում-2021»-ի շրջանակում, https://gaidarforum.ru/ru/program/936/:</p>
ԽՆԴԻՐ 3.2. Ակադեմիայի հետազոտական կարողությունների ընդլայնում	
Նախադրեւած գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>3.2.1. Գիտահետազոտական ծրագրերի թվի մեծացում՝ ավելացնելով դրանց ֆինանսավորման ծավալները և բազմազանեցնելով ֆինանսական ներհոսքի աղբյուրները</p> <p>Պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների հետազոտական կարողությունների ընդլայնում</p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի և հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ՀՀՌՀ - 2020» միջազգային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 20RF-189 ծածկագրով «Խարիզմատիկ առաջնորդությունը Արևելքի ժամանակակից քաղաքական մշակույթներում (մարդաբանական ասպեկտ)» գիտական ծրագիր, ղեկավար՝ քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ Մարգարյան Մարիամ Մամիկոնի</p> <p>Գիտական խորհրդի երաշխավորմանն են ներկայացվել հետևյալ գիտական թեմաները.</p> <p>1) «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ - ՀՀՌՀ - 2020» միջազգային մրցույթ, «Պետական և համայնքային ծառայության մասնագետների հոգեբանական անվտանգության անձնային և մասնագիտական գործոնները» վերտառությամբ գիտական թեմա</p> <p>2) «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ- ՀՀՌՀ -2020» միջազգային մրցույթ, «ԵԱՏՄ մարդկային կապիտալի կառավարման հիմքերի զարգացումը տնտեսական անկայունության պայմաններում որոշումների կայացմանն աջակցող թվային խելացի համակարգերի ներդրումը (ՌԴ և ՀՀ օրինակով)», ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից</p>

	<p>մից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցություն</p> <p>3) «ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ - ՀՀՌՀ - 2020» միջազգային մրցույթ, «Խարիզմատիկ առաջնորդությունը Արևելքի ժամանակակից քաղաքական մշակույթներում (մարդաբանական ասպեկտ)», ՀՀ ԿԳՄՄՆ ԳԿ և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցություն</p> <p>4) «Մեկ գոտի, մեկ ուղի». նոր մարտահրավերներ և նոր հնարավորություններ Հայաստանի համար» վերտառությամբ գիտական թեմա, գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոջ ընդգրկմամբ գիտական թեմաների մրցույթ, Օտարերկրյա գործընկեր - Ճան Նին (Zhang Ning) Չինաստանի հասարակագիտական ակադեմիայի Արևելյան Ասիայի և Կենտրոնական Ասիայի ինստիտուտի Կենտրոնական Ասիայի և Կովկասի հետազոտական կենտրոնի ղեկավար</p> <p>5) «Գիտության և կրթության տրանսֆորմացիաների կառավարման հիմնախնդիրները» վերտառությամբ գիտական թեմա, գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոջ ընդգրկմամբ գիտական թեմաների մրցույթ, Օտարերկրյա գործընկեր՝ Նանա Բուրդուլին, Վրաստան</p> <p>Պատրաստվել է Ակադեմիայում իրականացված գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի («Հումանիտար հետազոտությունների կենտրոն» ծրագիր («Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա», «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» և «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրեր) 2020 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությունը (նաև խտասկավառակով), ինչպես նաև Ակադեմիայի գիտական խորհրդի նիստի արձանագրությունից քաղվածքը՝ տարեկան հաշվետվությունն ընդունելու մասին:</p> <p>Գիտության կոմիտե է ներկայացվել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կողմից իրականացվելիք գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի հայտը (նաև խտասկավառակով) ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից ֆինանսավորում ստանալու նպատակով:</p> <p>Գիտության կոմիտե է ներկայացվել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 2022-2024 թվականների գիտական և</p>
--	--

	գիտատեխնիկական գործունեության միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտը:
ԽՆԴԻՐ 3.3. Ակադեմիայում իրականացվող հետազոտական հնարավորությունների մասին հանրության իրազեկվածության մակարդակի բարձրացում	
Նախադրված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
3.3.1. Ակադեմիայի տեղեկատվական հնարավորությունների առավելագույն օգտագործում հասարակությանն ու գիտական հանրությանը Ակադեմիայում կատարվող հետազոտական և նորամուծական աշխատանքներն ու դրանց արդյունքները ներկայացնելու համար	<p>Իրավագիտության ամբիոնն ունի 3 ասպի-րանտ և 5 հայցորդ: Իրավագիտության ամբիոնի նախաձեռնությամբ անցկացվել են մի շարք հանդիպում-քննարկումներ ասպիրանտների և հայցորդների հետ: Անցկացվել է ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտության ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:</p> <p>մագիստրոսական թեզեր http://dspace.paara.am/xmlui/ equals&filter=2019">http://dspace.paara.am/xmlui/handle/123456789/201/discover?filtertype=datelssued&filter_relational_operator>equals&filter=2019</p> <p>Ակադեմիայում շարունակվել է գործարկվել «Կայուն հարթակի ստեղծում Հայաստանում բաց մատչելի հրատարակությունների համար» թվային շտեմարանը՝ dspace.paara.am հասցեով:</p> <p>Առկա, հեռակա և հեռավար ուսուցման համակարգերի դիմորդների համար Ակադեմիայի ինտերնետային կայքի «Դիմորդ» բաժնում տեղադրվել է համապատասխան տեղեկատվություն: Կայքի «Նորություններ» բաժնում հրապարակվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն տարեկան 100 ավելի նյութ, իսկ «Հայտարարություն» բաժնում՝ մոտ 50 հայտարարություն:</p>
ԽՆԴԻՐ 3.4. Հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցման կառուցակարգերի մշակում	
Նախադրված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
3.4.1. Ակադեմիայում կատարվող հետազոտությունների որակի բարձրացում	2020 թվականի դեկտեմբերի 28-ի դրությամբ Ակադեմիան ունի 22 ասպիրանտ (առկա՝ 13, հեռակա՝ 9), 14 հայցորդ և 1 դոկտորանտ :
Գիտահետազոտական և ուսումնական գործընթացների ինտեգրում, սովորող-դասախոս համատեղ գիտահետազոտական գործունեությունը խրախուսող նոր կառուցակարգերի մշակում և գործարկում	<p>Ասպիրանտներից և հայցորդներից հինգը ընթացիկ տարում պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ կամ գիտական թեզը ներկայացրել են նախապաշտպանության և ապա՝ հրապարակային պաշտպանության:</p> <p>Ակադեմիան՝ որպես առաջատար կազմակերպություն, կարծիք է տվել դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների վերաբերյալ:</p> <p>Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները որպես պաշտոնական ընդդիմախոսներ են հանդես եկել թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության ժամանակ:</p> <p>2020 թ. հոկտեմբերից ասպիրանտուրայի բաժինն ընդգրկվել է Սլովենիայի Մարիբորի համալսարանի կողմից իրականացվող «Ժան Մոնե» ծրագրում, որի սահմաններում նախատեսված է նաև Ակադեմիայի ասպիրանտների մասնակցությունը գիտական էսսեներ ներկայացնելու տեսքով: Ներկայումս իրականացվում են</p>

	<p>նախապատրաստական աշխատանքներ՝ 2021 թ. հունվարից ասպիրանտների հետ միասին նշված հանձնարարականը կատարելու ուղղությամբ:</p> <p>Ակադեմիայում իրականացվող հետազոտությունների որակի բարձրացման, ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման, դասախոս – ուսանող համագործակցային կապի ամրապնդման ու բարելավման նպատակով Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնը պարբերաբար քննարկումներ է անցկացնում ուսանողական կառույցների ու մագիստրանտների հետ:</p> <p>Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնը միջազգային համագործակցությունից բացի, սերտ համագործակցություն ունի ԵՊՀ «Քաղաքականության տեսության և պատմության», Հայ-ռուսական համալսարանի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հետ:</p>
ԽՆԴԻՐ 3.6. Գիտահետազոտական ծրագրերում շահառուների մասնակցության ընդլայնում	
Նախապեսված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>3.6.1. Հանրապետական և միջազգային հետազոտական ծրագրերում դասախոսական կազմի, մագիստրանտների և ասպիրանտների ներգրավվածության մակարդակի բարձրացում</p>	<p>Ակադեմիայի աշխատակիցներն ունեցել են երկու տասնյակից ավելի էլեկտրոնային հրապարակում, հանդես են եկել վեց տասնյակից ավելի հարցազրույցներով ու մամուլի ասուլիսներով:</p> <p>2020 թվականին ընդհանուր առմամբ, Ակադեմիայի աշխատակիցները (այդ թվում՝ գիտական աշխատողներ) 50-ից ավելի զեկուցում են կարդացել միջազգային և տեղական գիտաժողովներում, հրապարակել են երեք մենագրություն, մեկ կոլեկտիվ մենագրություն, մեկ մեթոդական ուղեցույց և 49 գիտական հոդված:</p> <p style="text-align: center;">ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (ՈՒԳԸ) ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ</p> <ul style="list-style-type: none"> ➤ «ՀՀ ԱԻ նախարարության դերը կորոնավիրուսի դեմ պայքարում» խորագրով սեմինար-քննարկում ԱԻՆ փոխնախարար, քաղաքական գիտությունների թեկնածու Արմեն Հարությունյանի հետ, Քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի նախաձեռնությամբ, 2020թ. ապրիլի 23 ➤ «Ու՛ր է գնում գլոբալ աշխարհը և ՀՀ-ն. նոր աշխարհակարգ» թեմայով սեմինար-քննարկում, քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մարիամ Մարգարյանի հետ, 2020թ. ապրիլի 27 ➤ Առցանց հանդիպում ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի խորհրդական, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի գործադիր տնօրեն Թևան Պողոսյանի հետ. հանդիպման ընթացքում քաղաքագետը խոսել է Արցախի Հանրապետության կարգավիճակի, վարվող ներքին ու արտաքին քաղաքականության, զարգացման հիմնախնդիրների մասին, 2020 թ. մայիսի 14

	<p>➤ «Արտակարգ դրություն. իրավական հարցեր» խորագիրը կրող քննարկում, վարող՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական, դասախոս Գևորգ Դանիելյան, Իրավագիտության ամբիոնի նախաձեռնությամբ, 2020թ. մայիսի 5 և այլ միջոցառումներ</p>								
<p>3.6.2. Ակադեմիայի գիտահրատարակչական գործունեության, հրապարակվող աշխատանքների բարձր որակ ապահովող արդյունավետ մեխանիզմների ներդրում՝ խթանելով հեղինակավոր ամսագրերում Ակադեմիայի սովորողների և աշխատողների աշխատությունների հրապարակման ակտիվությունը</p>	<p>2020 թվականին հրատարակվել է «Հանրային կառավարում» գիտական հանդեսի 2 համար, https://paara.am/science/science-journal/:</p> <p>Առաջին թողարկումում գրախոսման է ներկայացվել 27 հոդված, որից մերժվել է տպագրության 4 և երաշխավորվել՝ 23 հոդված:</p> <p>Երկրորդ թողարկումում գրախոսման է ներկայացվել 21 հոդված, որից մերժվել է տպագրության 8 և երաշխավորվել՝ 13 հոդված:</p> <p>2020 թ. գրախոսման ներկայացված հոդվածների ընդհանուր թիվը կազմել է 48, որից մերժվել է տպագրության 12, երաշխավորվել՝ 36 հոդված:</p> <div data-bbox="699 663 1500 1098" data-label="Figure"> <table border="1"> <thead> <tr> <th>Category</th> <th>Count</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>Գրախոսվել է (Accepted)</td> <td>48</td> </tr> <tr> <td>Մերժվել է (Rejected)</td> <td>12</td> </tr> <tr> <td>Երաշխավորվել է (Guaranteed)</td> <td>36</td> </tr> </tbody> </table> </div> <p>2020 թ. ներկայացված և հրատարակման ներկայացված հոդվածների քանակը</p> <p>Իրավագիտության ամբիոնի 2020 թվականի հուլիսի 13-ի նիստ. Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Իզաբելլա Ալբերտի Իսկանդարյանի «Աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի իրականացման հիմնախնդիրները շուկայական հարաբերությունների պայմաններում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության նախնական պաշտպանություն:</p> <p>Իրավագիտության ամբիոնի 2020 թվականի սեպտեմբերի 29-ի նիստ. Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ Լյուդմիլա Հայրապետովայի թեկնածուական ատենախոսության՝ «Վարչարարության և վարչական վարույթի սկզբունքները և դրանց դերը պատշաճ վարչարարության իրավունքի իրացման հարցում» թեմայի հաստատում, ըստ ԺԲ. 00.02 Հանրային իրավունք մասնագիտության և իրավաբանական գիտությունների դոկտոր Հ.Վ. Թովմասյանին՝ որպես գիտական ղեկավարի նշանակում:</p>	Category	Count	Գրախոսվել է (Accepted)	48	Մերժվել է (Rejected)	12	Երաշխավորվել է (Guaranteed)	36
Category	Count								
Գրախոսվել է (Accepted)	48								
Մերժվել է (Rejected)	12								
Երաշխավորվել է (Guaranteed)	36								

	<p>Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ասպիրանտ Արմինե Չախալյանի թեկնածուական ատենախոսության՝ «Խորհրդարանական կառավարման համակարգի սահմանադրաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայի հաստատում, ըստ ԺԲ. 00.02 Հանրային իրավունք մասնագիտության և ի.գ.թ., պրոֆեսոր Ֆ.Պ. Թոխյանին՝ որպես գիտական ղեկավարի նշանակում:</p> <p>ՀՀ ՊԿԱ Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Արփինե Հունանի Առաքելյանի թեկնածուական ատենախոսության՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատումը (Հայաստանի Հանրապետության օրինակով)» թեմայի հաստատում, ըստ ԺԲ. 00.02 Հանրային իրավունք մասնագիտության և ի.գ.դ., պրոֆեսոր Ա. Խաչատրյանին՝ որպես գիտական ղեկավարի նշանակում:</p> <p>ՀՀ ՊԿԱ Իրավագիտության ամբիոնի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ Պետրոս Արմենի Վարդանյանի ատենախոսության թեմայի քննարկում և գիտական ղեկավարի առաջադրում:</p> <p>Իրավագիտության ամբիոնի 2020 թվականի հոկտեմբերի 27-ի նիստ.</p> <p>Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի ԺԲ. 00.02 Հանրային իրավունք մասնագիտության ասպիրանտ Իննա Նիկոլայի Ներսեսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների քաղաքական իրավունքների և ազատությունների սահմանադրական հիմունքները և դրանց իրացման արդի հիմնախնդիրները» փոփոխել և հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Հավաքների ազատության իրավունքը և դրա իրացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»:</p> <p>ՀՀ ՊԿԱ Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Արման Էդիկի Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության՝ «Քաղաքացիական նախաձեռնության և հանրագրի ինստիտուտների՝ որպես անմիջական ժողովրդաիշխանության իրացման ձևերի արդի հիմնախնդիրները» թեմայի հաստատում, ըստ ԺԲ. 00.02 Հանրային իրավունք մասնագիտության և ի.գ.դ., պրոֆեսոր Վ. Ստեփանյանին՝ որպես գիտական ղեկավարի նշանակում:</p> <p>ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 30.09.2020 թ. գիտական խորհրդի նիստի ժամանակ 2020-2021թ. մագիստրատուրայի հեռակա ուսուցման ժամաքանակների փոփոխությունների ներկայացում:</p> <p>Իրավագիտության ամբիոնի մագիստրատուրայի առկա ուսուցման 1925 թողարկման և հեռակա ուսուցման 1822 թողարկման «Իրավագիտություն» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի թեմաների կատարողական ընթացքի մասին ներկայացում:</p> <p>Իրավագիտության ամբիոնի 2020 թվականի նոյեմբերի 26-ի նիստ. «Իրավագիտություն» կրթական ծրագրով հեռակա ուսուցման 2-րդ կուրսի մագիստրանտ Մարիամ Լյովայի Սարգսյանի՝ ՀՀ</p>
--	---

	բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողների անվանական կրթաթոշակների տրամադրման մրցույթի մասնակցություն:
3.6.3. Երիտասարդ գիտնականների ներգրավման, խրախուսման և գիտաշխատողի մասնագիտական առաջընթացի գրավչության բարձրացման համար կառուցակարգերի մշակում	2020 թվականին հրատարակվել է « Հանրային կառավարում» գիտական հանդեսի 2 համար , https://paara.am/science/science-journal/ : Առաջին թողարկումում գրախոսման է ներկայացվել 27 հոդված, որից մերժվել է տպագրության 4 և երաշխավորվել՝ 23 հոդված: Երկրորդ թողարկումում գրախոսման է ներկայացվել 21 հոդված, որից մերժվել է տպագրության 8 և երաշխավորվել՝ 13 հոդված: 2020 թ. գրախոսման ներկայացված հոդվածների ընդհանուր թիվը կազմել է 48, որից մերժվել է տպագրության 12, երաշխավորվել՝ 36 հոդված:

ՆՊԱՏԱԿ 4. Կառավարման արդյունավետության բարձրացում, կորպորատիվ մշակույթի բարելավում, համագործակցային միջավայրի և անձնակազմի մասնագիտական որակների զարգացում, 9 խնդիր և 27 միջոցառում/գործողություն

Կատարված միջոցառում	Չկատարված միջոցառում	Հրատապ միջոցառում	Ընթացքի մեջ միջոցառում
7	6	10	4
ՆՊԱՏԱԿ 4. Կառավարման արդյունավետության բարձրացում, կորպորատիվ մշակույթի բարելավում, համագործակցային միջավայրի և անձնակազմի մասնագիտական որակների զարգացում			
4.1.1. Ակադեմիայի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգի մշակում՝ որակի ապահովման ընթացակարգերի և չափանիշների համապատասխանությունն ընդունված չափորոշիչներին գնահատելու, Ակադեմիայի գիտական խորհրդի հաստատմանը որակի ապահովման և գնահատման ընթացակարգերի, կրթական ծրագրերի	4.2.1. Մարդկային ռեսուրսների կառավարման հայեցակարգ Ակադեմիայի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի մշակում և ներդրում 4.2.2. Ստորաբաժանումների կանոնադրությունների վերանայում և լրամշակում 4.2.3. Բոլոր հաստիքների պաշտոնների անձնագրերի (աշխատանքի	4.1.4. Ակադեմիայի անձնակազմի և սովորողների կողմից ընդունված՝ ստեղծված և արմատավորված արժեքների և վարքագծի կանոնների համակարգ, էթիկայի հանձնաժողովի ստեղծում (նոր կազմի ձևավորում)՝ էթիկայի կանոնների և ակադեմիական բարեվարքության վարքականոնների պահպանմանը նպաստելու նպատակով 4.3.2. Հաստիքացուցակի ձևավորման գործընթացի բարելավում և	4.5.1. Ակադեմիայի աշխատողների սոցիալական խնդիրների մշտադիտարկման համակարգ, պարբերաբար իրականացնել աշխատողների սոցիալական պահանջմունքների ուսումնասիրություն և Ակադեմիայում իրականացվող սոցիալական ծրագրերից աշխատողների բավարարվածության գնահատում

<p>չափորոշիչների և ուսումնական պլանների, որակի ապահովման կանոնակարգային փաստաթղթերի երաշխավորումն ապահովելու նպատակով</p> <p>4.1.2.2019-2024թթ.</p> <p>Ռազմավարական ծրագրի և միջոցառումների ծրագրի արդյունքների գնահատում</p> <p>4.1.3. Ուսանողի համար որակի ձեռնարկ Որակի համաշխարհային օրվա կապակցությամբ (World Quality Day)</p> <p>«Կյանքի որակ և կրթության որակ» խորագրով ամենամյա միջոցառման</p> <p>կազմակերպում և անցկացում</p> <p>4.3.1. Կադրային բազայի ստեղծում</p> <p>4.6.1. Կրթական ոլորտին վերաբերող կարևոր հարցերի շուրջ «կլոր սեղանների» անցկացում</p> <p>Կառուցողական համագործակցության զարգացման ապահովում</p> <p>Պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանում</p> <p>4.8.1. Դասախոսների, ուսումնաօժանդակ կազմի և վարչակազմի կարիքների վերհանում՝ աշխատանքային և սոցիալական բարենպաստ պայմանների ստեղծման համատեքստում</p> <p>4.8.2. Ակադեմիայի գործունեության մասին մատչելի և հասանելի տեղեկատվության, գործունեության</p>	<p>նկարագիր) մշակում և/կամ վերանայում</p> <p>4.2.4. Ակադեմիայի կառավարման բոլոր մակարդակներում իրավական ակտերի (փաստաթղթային փաթեթներ) ապահովման շարունակական զարգացում՝ օրենսդրական, ներքին կազմակերպական փոփոխություններին համահունչ/ Գիտական խորհրդի կանոնակարգ Ռեկտորատի կանոնակարգ Վերանայված ներքին կարգապահական կանոններ/</p> <p>4.4.1. Ակադեմիայի ղեկավար, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմերի աշխատողների աշխատանքային գործունեության գնահատման, խրախուսման կարգի մշակում</p> <p>4.4.2. Միջազգային գրախոսվող գիտական պարբերականներում հետազոտությունների արդյունքների հրապարակման խրախուսում</p>	<p>հաստիքների օգտագործման արդյունավետության բարձրացում</p> <p>4.5.2. Աշխատակիցների առողջության ապահովագրության ծրագրի իրականացում՝ դրանում Ակադեմիայի արտաբյուջետային միջոցներից մասնակի ներդրումներ ունենալու միջոցով</p> <p>4.7.1. Բարելավրթության և ակադեմիական մնայուն արժեքների պահպանման ու զարգացման քաղաքականության մշակում և ներդրում</p> <p>4.7.2. Ակադեմիայում բարոյահոգեբանական պատշաճ մթնոլորտի ձևավորման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ պայմանների ապահովում</p> <p>4.8.4. Ընթերցանությունը խթանող տարբեր PR ակցիաներ՝ տարեկան առնվազն մեկ անգամ Գրադարանի և Ակադեմիայի ստորաբաժանումների փոխհամագործակցային կապի սերտացում՝ գրադարանի ֆոնդերի համալրման, պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների համար թեմատիկ շտեմարանների կազմման, համատեղ միջոցառումների կազմակերպման միջոցով</p> <p>4.8.6. Ակադեմիայի կայքի բարելավում Ակադեմիայի կայքի կատարելագործում, նրա լրատվական ապահովման տեխնիկական վիճակի և</p>	<p>4.8.3. Ակադեմիայի գրադարանի ենթակառուցվածքի զարգացում՝ միտված ժամանակակից միջազգային պահանջներին և մասնագիտական չափանիշների համապատասխանեցմանը</p> <p>4.8.5. Գրադարանի և ընթերցասրահի բարելավում, ուսանողների, դասախոսների, շահառուների համար սպասարկման արդիական պայմանների ապահովում</p> <p>4.8.7. Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների (S&S) արդյունավետ կիրառում</p> <p>Ակադեմիայի կրթական, ներքին կառավարման և աշխատանքային գործընթացներում</p>
--	---	---	--

<p>հրապարակայնության ու թափանցիկության ապահովում</p>		<p>շահագործման արդյունավետության բարելավում 4.9.1. Անձնակազմի վերապատրաստման և կատարելագործման կառուցակարգի մշակում 4.9.2. Վարչական կազմի կառավարչական հմտությունների կատարելագործում վերապատրաստումների միջոցով 4.9.3. Աշխատողների մասնագիտական զարգացման ապահովում Դասախոսների վերապատրաստումների կազմակերպման համակարգի զարգացում և որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրերի կատարելագործում</p>	
--	--	---	--

<p>ԽՆԴԻՐ 4.1. Ռազմավարական և ընթացիկ աշխատանքային խնդիրների լուծման համար արդյունավետ աշխատանքային խմբերի ձևավորում</p>	
<p>Նախատեսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>4.1.2.2019-2024թթ. Ռազմավարական ծրագրի և միջոցառումների ծրագրի արդյունքների գնահատում</p>	<p>Որակի ապահովման կենտրոնը յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 15-օրյա ժամկետում Ակադեմիայի ռեկտորին ներկայացրել է իրականացված միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն: 2020 թվականի 2-րդ կիսամյակի միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվության մեջ կատարվել է որոշակի գնահատում և կներկայացվի ռեկտորին: 2020 թ. կտրվածքով 2019-2024թթ. Ռազմավարական ծրագրի և միջոցառումների ծրագրի արդյունքների գնահատումն ընթացքի մեջ է և այն կներկայացվի սահմանված ժամկետում՝ գիտական խորհրդի մարտի նիստում:</p>
<p>4.1.3.Որակի համաշխարհային օրվա կապակցությամբ (World Quality Day) «Կյանքի որակ և կրթության որակ» խորագրով ամենամյա միջոցառման կազմակերպում և անցկացում</p>	<p>Որակի ապահովման կենտրոնը մշակել է «Ուսանողի ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացում» ուսանողական ձեռնարկը (հաստատված է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի ապրիլի 29-ի նիստում), https://paara.am/wp-content/uploads/2016/02/Ուսանողական-ձեռնարկ-2020.pdf Ձեռնարկի նպատակը Ակադեմիայում ուսանողական ներգրավվածության մշակույթի զարգացումն է և ուսանողներին որակի ապահովման, ուսումնական և կրթական գործունեության</p>

	<p>հզորացման գործընթացներում ներգրավելու գործողությունների շարք հիմնելը:</p> <p>Ձեռնարկի նպատակներից մեկն էլ Ակադեմիայում կրթության որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ուսանողների իրազեկվածությունը բարձրացնելն է: Միաժամանակ այն կրթության որակի ապահովման, գնահատման և կառավարման ոլորտում Ակադեմիայի գործունեությանը ծանոթանալու հնարավորություն է ընձեռում:</p> <p>Ձեռնարկի հիմնական թիրախային խումբը ուսանողներն են, և պատահական չէ, որ այստեղ ներկայացված են նաև ուսանողների տեսակետները կրթության որակի վերաբերյալ:</p> <p>«Կյանքի որակ և կրթության որակ» խորագրով ամենամյա միջոցառումները կկազմակերպվեն և կանցկացվեն 2021 թվականից սկսած՝ COVID-19 համավարակի և պատերազմական դրությամբ պայմանավորված:</p>
ԽՆԴԻՐ 4.2. Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ համակարգի ներդրում	
Նախադրեցված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>4.2.1. Ակադեմիայի մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի մշակում և ներդրում</p> <p>Մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետ քաղաքականության իրականացում</p>	<p>E-BUH համակարգի մասնակի ներդրում</p> <p>Ուսումնասիրվում է տեղական և միջազգային փորձը:</p>
<p>4.2.2. Ստորաբաժանումների կանոնադրությունների վերանայում և լրամշակում</p> <p>Առանձին ստորաբաժանումների կրկնվող, ինչպես նաև բացակայող կամ ամրապնդման կարիք ունեցող գործառույթների վերհանում</p> <p>Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների ու պատասխանատվության ճիշտ բաշխում</p>	<p>Որոշ ստորաբաժանումներն արդեն ներկայացրել են իրենց կողմից լրամշակված կանոնադրությունները</p>
<p>4.2.3. Բոլոր հաստիքների պաշտոնների անձնագրերի (աշխատանքի նկարագիր) մշակում և/կամ վերանայում՝ համաձայն ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 2013 թ. սեպտեմբերի 19-ի N 873-Ն հրամանով հաստատված «ՀՀ</p>	<p>COVID-19 համավարակի և պատերազմական դրությամբ պայմանավորված աշխատանքները չեն իրականացվել, քանի որ կառուցվածքը վերանայելու անհրաժեշտություն ունի:</p>

<p>տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության «Զբաղմունքների դասակարգչի»</p>	
<p>4.2.4. Ակադեմիայի կառավարման բոլոր մակարդակներում իրավական ակտերի (փաստաթղթային փաթեթներ) ապահովման շարունակական զարգացում՝ օրենսդրական, ներքին կազմակերպական փոփոխություններին համահունչ</p>	<p>Մշտապես իրականացվող գործընթաց է:</p> <p>Մշակվել և հաստատվել են մեկ տասնյակից ավելի փաստաթղթեր.</p> <p>Կիրառվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ:</p> <p>Շարունակվել է Ակադեմիային հասցեագրված թղթային և էլեկտրոնային նամակներին օպերատիվ արձագանքելու գործընթացը: Ակադեմիային ուղղված բոլոր հարցումներն ստացել են սպառիչ պատասխաններ:</p> <p>Համակարգի հիմնական խնդիրներն են՝ Ակադեմիայում փաստաթղթերի հոսքի արդյունավետ կառավարում, փաստաթղթերի կենտրոնացված պահպանում, միասնական ձևի ապահովում, մի քանի ստորաբաժանումների միաժամանակյա աշխատանքի ապահովում և փաստաթղթերի կորստի բացառում:</p> <p>Կիրառվել է փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային «Մալբերի» համակարգը:</p> <p>Ակադեմիայի գործառույթներին առնչվող բոլոր գրությունների, դիմումների, իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ սահմանված ժամկետներում ներկայացվել են պատասխաններ, առաջարկություններ և դիտողություններ:</p> <ul style="list-style-type: none"> • Ակադեմիայի ռեկտորի անհատական և ներքին իրավական ակտեր - 310 • Դիմումներ – 831 • Մտից պաշտոնական գրություններ – 404 • Մտից ոչ պաշտոնական գրություններ – 22 • Ելից պաշտոնական գրություններ – 630 • Թեկնածուական ատենախոսությունների վերաբերյալ կարծիքներ – 15 <p>Կատարվել է Ակադեմիայի գործունեության ընթացքում ստեղծված փաստաթղթերի դասակարգում, հաշվառում և արխիվացում:</p>
<p>ԽՆԴԻՐ 4.3. Սեփական կադրային դպրոցի ստեղծում</p>	
<p>Նախադրեսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>4.3.1. Կադրային բազայի ստեղծում</p>	<p>E-BUH (ընթացքի մեջ)</p> <p>անձնական տվյալների բազա (Excel ծրագրով). (ընթացքի մեջ)</p>
<p>ԽՆԴԻՐ 4.4. Ըստ արդյունավետության գնահատման՝ աշխատավարձի հաշվարկման համակարգի ներդրում</p>	
<p>Նախադրեսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>4.4.1. Ակադեմիայի ղեկավար, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմերի աշխատողների աշխատանքային</p>	<p>Ընթացքի մեջ է:</p>

գործունեության գնահատման, խրախուսման կարգի մշակում	
4.4.2. Միջազգային գրախուսվող գիտական պարբերականներում հետազոտությունների արդյունքների հրապարակման խրախուսում	Ընթացքի մեջ է:
ԽՆԴԻՐ 4.5. Սոցիալական լրացուցիչ երաշխիքների, պաշտոնական առաջխաղացման կառուցակարգերի ներդրում	
Նախատեսված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
4.5.1. Ակադեմիայի աշխատողների սոցիալական խնդիրների մշտադիտարկման համակարգ, պարբերաբար իրականացնել աշխատողների սոցիալական պահանջմունքների ուսումնասիրություն և Ակադեմիայում իրականացվող սոցիալական ծրագրերից աշխատողների բավարարվածության գնահատում	<p>2020 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում Ակադեմիայի արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից հատկացվել է.</p> <p>Դրամական աջակցություն հարազատի մահվան կապակցությամբ՝ 60 000 ՀՀ դրամ</p> <p>Դրամական աջակցություն սոցիալական նպատակով՝ 30 000 ՀՀ դրամ</p> <p>Հարազատի մահվան կապակցությամբ ծաղկեպսակի համար՝ 20 500 ՀՀ դրամ</p> <p>Ամուսնության կապակցությամբ՝ 60 000 ՀՀ դրամ</p> <p>Հոբելյանական տարեդարձի կապակցությամբ՝ 20 000 ՀՀ դրամ</p> <p>Հաշվի առնելով երկրում կորոնավիրուսի (COVID 19) հետևանքով ստեղծված համաճարակային իրավիճակը, Արևմտահայաստանի 2020 թվականի հունիսի 25-ի նիստին քննարկվեց և որոշվեց Արհեստական կազմակերպության ֆինանսական միջոցներից հատկացնել 231 000 ՀՀ դրամ՝ աշխատակիցներին, բժշկական դիմակներ ձեռք բերելու նպատակով:</p> <p>2020 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում Ակադեմիայի արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցներից հատկացվել է.</p> <p>Հոբելյանական տարեդարձերի կապակցությամբ՝ 140 000 ՀՀ դրամ</p> <p>Դրամական աջակցություն արհեստակցական կազմակերպության անդամի հարազատի մահվան կապակցությամբ՝ 80 000 ՀՀ դրամ</p> <p>Դրամական աջակցություն արհեստակցական կազմակերպության անդամի մահվան կապակցությամբ՝ 50 000 ՀՀ դրամ</p> <p>Հարազատի մահվան կապակցությամբ ծաղկեպսակի համար՝ 107 000 ՀՀ դրամ</p> <p>Երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 60 000 ՀՀ դրամ</p> <p>Դրամական աջակցություն արհեստակցական կազմակերպության անդամին՝ պատերազմում զավակի վիրավորելու կապակցությամբ՝ 100 000 ՀՀ դրամ</p> <p>Պարգևատրում արհկոմիտեի անդամին՝ 20 000 ՀՀ դրամ</p> <p>«Մենք ենք մեր սահմանները» ծրագրի շրջանակներում նվիրատվություն Հայաստան համահայկական հիմնադրամին՝ 700 000 ՀՀ դրամ:</p>
4.5.2. Աշխատակիցների առողջության ապահովագրության ծրագրի իրականացում՝ դրանում Ակադեմիայի արտաբյուջետային	Աշխատակիցների առողջության ապահովագրության մասին հարցը քննարկվել է Ակադեմիայի 2020թ. մարտի 9-ի նեկտորատի նիստում: Գործընթացը ժամանակավոր դադարեցվել է:

միջոցներից մասնակի ներդրումներ ունենալու միջոցով	
ԽՆԴԻՐ 4.6. Պրոֆեսորադասախոսական կազմի հետ պարբերաբար կազմակերպվող հանդիպումների խթանում	
Նախադեսված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>4.6.1. Կրթական ոլորտին վերաբերող կարևոր հարցերի շուրջ «կլոր սեղանների» անցկացում</p> <p>Կառուցողական համագործակցության զարգացման ապահովում</p> <p>Պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանում</p>	<p>Որակի ապահովման կենտրոնը անցկացրել է Ակադեմիայի դասախոսների շրջանում կրթության որակի ապահովման համակարգի վերաբերյալ հարցում. անցկացված հարցման արդյունքների մասին հաշվետվությունը (2019-2020 թթ. ուսումնական տարի) ներկայացվել է ռեկտորին, գիտական խորհրդի նիստում և ամբիոններին, 68 էջ:</p> <p>Դասախոսները նաև գնահատել են առցանց դասընթացի մի քանի առանձնահատկություններ:</p> <p>Դասախոսների կարծիքը կարևորելով՝ հարցաթերթում ներառված էր հարց, թե, ըստ նրանց, ի՞նչ խնդիրներ կան առցանց դասավանդման ընթացքում, որոնք կարելի է լուծել որոշակի ժամանակահատվածում: Փորձել ենք պարզել նաև Ակադեմիայի վարչական կազմի աշխատանքի վերաբերյալ դասախոսների բավարարվածությունը: Հարցմանը մասնակցած դասախոսների 44.2%-ը գերազանց, իսկ ևս 44.2%-ը «լավ» են գնահատել Ակադեմիայի վարչական կազմի (ռեկտոր, պրոռեկտորներ, անձնակազմի կառավարման ստորաբաժանում) աշխատանքը դասախոսների հետ, 7.7%-ը այն համարել է բավարար, իսկ 3.9%-ը՝ անբավարար:</p> <p>Ուսումնամեթոդական վարչության աշխատակիցների՝ դասախոսների հետ տարվող աշխատանքը հարցմանը մասնակցած դասախոսների 38.5%-ը գերազանց է գնահատել, 51.9%-ը՝ լավ, 7.7%-ը բավարար և ընդամենը 1.9%-ը՝ անբավարար:</p> <p>Հարցման արդյունքում բացահայտվել է հետաքրքիր փաստ. դասախոսների մեծ մասը՝ 71.1%-ը, ցանկանում է շարունակել առցանց դասավանդումը: Ուսանողներին ևս տրվել է նույն հարցը՝ արդյոք նրանք ցանկանո՞ւմ են ուսումը շարունակել առցանց տարբերակով, թե ոչ, սակայն ուսանողների 61.7%-ը չի ցանկացել ուսումը շարունակել առցանց տարբերակով:</p> <p>Ամբիոնում տարվող աշխատանքների առանձին բաղադրիչներից առավել բարձր գնահատականի է արժանացել «Ամբիոնում տիրող սոցիալ-հոգեբանական մթնոլորտ» բաղադրիչը, իսկ առավել ցածր գնահատականի՝ «Ամբիոնի համագործակցությունը Ակադեմիայի մյուս ամբիոնների, ինչպես նաև լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի հետ» բաղադրիչը:</p> <p>Ակադեմիայի դասախոսները կրթության որակի հետագա բարձրացման համար կարևորում են.</p> <ul style="list-style-type: none"> - կրթական ծրագրերի հետագա լրամշակումը և համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին, - դասավանդման ժամանակակից ինտերակտիվ մեթոդների կիրառումը կրթական գործընթացներում, - գործատուների հետ փոխադարձ կապի հետագա զարգացումը : <p>Որպես լրացուցիչ քայլեր՝ դասախոսների կողմից արվել են հետևյալ առաջարկությունները.</p> <ul style="list-style-type: none"> - վարձատրման համակարգի վերանայում, - կրթական մեթոդների շարունակական արդիականացում,

	- համագործակցություն արտասահմանյան կրթական կազմակերպությունների հետ:
ԽՆԴԻՐ 4.7. Ակադեմիական ազատության և փոխըմբռնման մթնոլորտի խրախուսում	
Նախադեմիական գործողություն	Իրականացված գործողության արդյունք
4.7.1. Բարեվարքության և ակադեմիական մնայուն արժեքների պահպանման ու զարգացման քաղաքականության մշակում և ներդրում Ակադեմիական անազնվության դրսևորումները բացառող կանոնների մշակում	Մշակվել և պատրաստվել են արտադրության Ակադեմիայի տարբերանշանով զանազան իրեր:
4.7.2. Ակադեմիայում բարոյահոգեբանական պատշաճ մթնոլորտի ձևավորման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման համար անհրաժեշտ պայմանների ապահովում	ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2015 թվականից գործում է «Վարքագծի կանոնագիրքը», որում ամրագրված սկզբունքների հանդեպ հարգանքն ու դրանց պահպանումը պարտադիր են Ակադեմիայի բոլոր ուսանողների և աշխատողների համար: Ակադեմիան կարևորում է վերջիններիս մասնակցությունը «Վարքագծի կանոնագիրքի» վերանայման և նոր դրույթներով համալրելու գործին: Այդ նպատակով ՀՀ ՊԿԱ որակի ապահովման կենտրոնն անցկացնում է հարցում՝ համոզված լինելով, որ հարցման արդյունքները մեծապես կօգնեն վարքագծի նոր կանոնագիրքի կազմման աշխատանքին, հղում՝ https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLScBBfSYK8Ug1uAR1xk2mLwVuRiOcsQRTofiwPEdT-XDiGTy6A/viewform?usp=sf_link
ԽՆԴԻՐ 4.8. Աշխատանքային գրավիչ պայմանների և միջավայրի ստեղծում ու ապահովում	
Նախադեմիական գործողություն	Իրականացված գործողության արդյունք
4.8.1. Դասախոսների, ուսումնասօժանդակ կազմի և վարչակազմի կարիքների վերհանում՝ աշխատանքային և սոցիալական բարենպաստ պայմանների ստեղծման համատեքստում Սովորողների և դասախոսների համագործակցության զարգացման ապահովում ինչպես ուսումնական, այնպես էլ այլ ոլորտներում	Որակի ապահովման կենտրոնը անցկացրել է Ակադեմիայի դասախոսների շրջանում կրթության որակի ապահովման համակարգի վերաբերյալ հարցում . անցկացված հարցման արդյունքների մասին հաշվետվությունը (2019-2020 թթ. ուսումնական տարի) ներկայացվել է ռեկտորին, գիտական խորհրդի նիստում և ամբիոններին, 68 էջ:
4.8.2. Ակադեմիայի գործունեության մասին մատչելի և հասանելի տեղեկատվության, գործունեության հրապարակայնության ու թափանցիկության ապահովում	Համավարակի պայմաններում ակտիվ գործարկվել է Ակադեմիայի Google G Suite համակարգը: Աշխատակիցներին, դասախոսներին և ուսանողներին տրամադրվել են էլեկտրոնային հասցեներ համակարգից օգտվելու համար: Հեռավար, առցանց դասերի կազմակարպման համար ուսումնամեթոդական վարչությանը ցուցաբերվել է անհրաժեշտ տեխնիկական օժանդակություն՝ հեռավար, առցանց դասերը ըստ դասացուցակի կազմակերպելու համար: Դասախոսներին և

	<p>ուսանողներին տրամադրվել է անհրաժեշտ տեխնիկական աջակցություն՝ առցանց դասերին միանալու համար:</p> <p>Կատարվել են տեսակոնֆերանսների կազմակերպման և ձայնագրման համար նախատեսված Webinar նոր համակարգի տեղադրման և հեռավար ուսուցման Moodle հարթակի արդյունավետ և օպերատիվ կառավարման աշխատանքներ:</p> <p>Հեռավար ուսուցումն ավելի մատչելի դարձնելու համար ամբողջությամբ փոփոխվել է հեռավար ուսուցման կառավարման Moodle հարթակի միջերեսը:</p> <p>Պարբերաբար կատարվել է Ակադեմիայի պաշտոնական կայքի դինամիկ թարմացում երեք լեզվով: Կայքի տարեկան այցելությունների թիվն աճել է 67495–ով (43.7 տոկոսով). նախորդ տարվա 154382-ի փոխարեն այս տարի արձանագրվել է 221877 այցելություն: Հատկանշական է, որ 83.5%-ը կազմել են նոր այցելությունները:</p> <p><i>Ակադեմիայի պաշտոնական կայքի տարեկան այցելությունների թվի համեմատություն.</i></p>  <table border="1" data-bbox="690 724 1282 1039"> <thead> <tr> <th>Տարի</th> <th>Այցելությունների թիվ</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>2015թ.</td> <td>80507</td> </tr> <tr> <td>2016թ.</td> <td>89524</td> </tr> <tr> <td>2017թ.</td> <td>95425</td> </tr> <tr> <td>2018թ.</td> <td>138651</td> </tr> <tr> <td>2019թ.</td> <td>154382</td> </tr> <tr> <td>2020թ.</td> <td>221877</td> </tr> </tbody> </table>	Տարի	Այցելությունների թիվ	2015թ.	80507	2016թ.	89524	2017թ.	95425	2018թ.	138651	2019թ.	154382	2020թ.	221877
Տարի	Այցելությունների թիվ														
2015թ.	80507														
2016թ.	89524														
2017թ.	95425														
2018թ.	138651														
2019թ.	154382														
2020թ.	221877														
<p>4.8.3.Ակադեմիայի գրադարանի ենթակառուցվածքի զարգացում՝ միտված ժամանակակից միջազգային պահանջներին և մասնագիտական չափանիշների համապատասխանեցմանը</p> <p>Գրադարանի գրքային ֆոնդի ընդլայնում՝ համալրելով գրադարանի ռեսուրսները Հայաստանում և արտերկրում հրատարակված տպագիր և էլեկտրոնային նյութերով</p>	<p>Գրադարանի ֆոնդը համալրվել է 371 միավոր գրականությամբ, թվայնացվել է 51 գիրք:</p> <p>Հետագա համալրման համար Ակադեմիայի գիտատեխնիկական գրադարանը համագործակցում է Ակադեմիայի ստորաբաժանումների, ամբիոնների, դասախոսների հետ:</p> <p>Հրատարակվել է «Հանրային կառավարում» գիտական հանդեսի 2020 թվականի 2-րդ համարը՝ 300 օրինակ տպաքանակով:</p> <p>Իրավագիտության ամբիոնի դասախոսների կողմից տպագրվել է (գիտության պետական կոմիտեի թեմատիկ ֆինանսավորմամբ 18T-5E130 «Խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները» գիտական թեմայի շրջանակներում) «Խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները» վերտառությամբ կոլեկտիվ մենագրությունը (հեղինակներ՝ Վ.Ստեփանյան, Հ.Ստեփանյան, Հ.Կետոյան)</p> <p>Տպաքանակը՝ 300 օրինակ</p> <p>Կատարվել է OpenEdition Freemium Journals-ի էլեկտրոնային բաժանորդագրություն (https://eifl.net/news/eifl-and-openedition-renew-agreement):</p>														

	<p>Նոր կորոնավիրուսի համավարակի պայմաններում անհրաժեշտ մասնագիտական գրականությունը տրամադրվել է առցանց տարբերակով:</p> <p>https://paara.am/home/library/electronayin_grqeri_onlinepatver/</p>
<p>4.8.4.Գրադարանի և Ակադեմիայի ստորաբաժանումների փոխհամագործակցային կապի սերտացում՝ գրադարանի ֆոնդերի համալրման, պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների համար թեմատիկ շտեմարանների կազմման, համատեղ միջոցառումների կազմակերպման միջոցով</p>	<p>Ակադեմիայի ինստիտուցիոնալ պահոց՝ DSspace հարթակ է տեղադրվել 2019–2020 ուսումնական տարվա շրջանավարտների (համաձայնագիր կնքած) մագիստրոսական թեզերը:</p> <p>Գրադարանի ֆոնդը Կառավարման ամբիոնի կողմից համալրվել է պահանջվող մասնագիտական գրքերի էլեկտրոնային տարբերակներով:</p> <p>Լրամշակվել և Անձնակազմի կառավարման և ընդհանուր բաժին է ներկայացվել Գիտատեխնիկական գրադարանի կանոնադրությունը: Կնքվել է «Հայաստանի թվային գրադարանների ասոցիացիա» ՀԿ-ը անդամակցության պայմանագիր:</p> <p>Պլանավորվել էր «Խորհրդարանական կառավարման ձևի արդի հիմնախնդիրները / Վ.Ստեփանյան, Հ.Ստեփանյան, Հ.Կեսոյան» գրքի շնորհանդես:</p> <p>Մասնակցել ենք «Արևմտյան Բալկանների տեղեկատվական և մեդիա գրագիտություն» թեմայով միջազգային առցանց կոնֆերանսին:</p> <p>Մասնակցել ենք բաց գիտության, բաց հետազոտական տվյալների և բաց գիտության ազգային ենթակառուցվածքի վերաբերյալ ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի կողմից կազմակերպած առցանց միջոցառմանը:</p> <p>Ակադեմիայի գրադարանի գրքային ֆոնդը Իրավագիտության ամբիոնի կողմից համալրվել է հետևյալ գրականությամբ՝ «Խորհրդարան-նական կառավարման ձևի արդի հիմնա-խնդիրները» Երևան. Արտագերս. 2020, 300 օրինակ:</p>
<p>4.8.5.Գրադարանի և ընթերցասրահի բարեկարգում, ուսանողների, դասախոսների, շահառուների համար սպասարկման արդիական պայմանների ապահովում</p>	<p>Կատարվել է առաջին կուրսի ուսանողների գրանցում: Ուսանողներին հանգամանալից ներկայացվել է գրադարանից օգտվելու կանոնները:</p> <p>Նոր կորոնավիրուսի համավարակի պայմաններում անհրաժեշտ մասնագիտական գրականությունը հիմնականում տրամադրվել է առցանց տարբերակով:</p> <p>https://paara.am/home/library/electronayin_grqeri_onlinepatver/</p>
<p>4.8.6. Ակադեմիայի կայքի բարելավում Ակադեմիայի կայքի կատարելագործում, նրա լրատվական ապահովման տեխնիկական վիճակի և շահագործման արդյունավետության բարելավում</p>	<p>Աշխատանքներ են տարվում Ակադեմիայի պաշտոնական կայքը նոր ձևաչափով գործարկելու և թիրախային խմբին ներկայացնելու ուղղությամբ:</p> <p>Ակադեմիայի կայքի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով.</p> <p>«ԷյԲիՍիդոմեյն» ՍՊԸ-ից ձեռք է բերվել դոմեյնի SSL սերտիֆիկատներ</p> <p>«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ից ձեռք է բերվել paara.am հանգուցային անվանման գրանցման ծառայություն:</p>
<p>4.8.7. Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների (S<S) արդյունավետ կիրառում Ակադեմիայի կրթական, ներքին կառավարման և աշխատանքային գործընթացներում</p>	<p>«Էդու Սիսթեմս» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր՝ «ebus Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգ» կրթական համակարգչային և հայալեզու ծրագրային փաթեթի տրամադրման, ներդրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով</p>

ՆՊԱՏԱԿ 5. Ֆինանսական կայունության և կառավարման արդյունավետության բարձրացում, 7 խնդիր և 15 միջոցառում/գործողություն


Կատարված միջոցառում	Չկատարված միջոցառում	Հրատապ միջոցառում	Ընթացքի մեջ միջոցառում
5	1	4	5
ՆՊԱՏԱԿ 5. Ֆինանսական կայունության և կառավարման արդյունավետության բարձրացում			
<p>5.1.1. Ֆինանսական միջոցների ներհուսքի ապահովում և դրանց աղբյուրների բազմազանեցում՝ Ակադեմիայի զարգացման կարիքներին համապատասխան, պարբերական 5.3.1. Լրացուցիչ ֆինանսական հոսքերի ապահովում. Ակադեմիայի լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի զարգացում և ընդլայնում 5.4.2. Գնումների մրցույթների պատշաճ կազմակերպում. Ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգի և նյութական արժեքների հաշվառման գործընթացի՝ ժամանակի պահանջներին ու խնդիրներին համահունչ պլանավորում կատարելագործում 5.4.3. Ռեսուրսախնայողական քաղաքականության ապահովում 5.6.2. Ակադեմիայի հաշվետվությունների կազմման բովանդակային և ընթացակարգային</p>	<p>5.2.1. Ընդունելության աջակցման և մարքեթինգի ամենամյա գործող հանձնաժողովի ստեղծում և դրա շրջանակներում արտաքին միջավայրային վերլուծության իրականացում</p>	<p>5.2.2. Ակադեմիայի ընդունելության առկա պահանջների ուսումնասիրություն (քննությունների ցանկ, մրցույթի կարգ) և, ըստ անհրաժեշտության, առավելագույն ճկունություն, օբյեկտիվ մրցակցություն ապահովող համալիր փոփոխությունների իրականացում 5.2.3. Նոր մոտեցումների կիրառում Ակադեմիայի ընդունելության գովազդարշավում՝ գովազդային տեխնոլոգիաների, հաղորդակցության ժամանակակից միջոցների լայն օգտագործմամբ Ըստ պահանջի՝ ֆիլմերի նկարահանում, ցուցադրություն (տարեկան՝ 1 ֆիլմ) 5.2.4. Կրթական ծրագրերի, դրանց վարձավճարների, ընդունելության անցկացման կարգի, դիմորդներին հետաքրքրող հարցերի հիման վրա կազմվող տեղեկատվական թռուցիկներ, տեսահղումներ, տեղեկատվական</p>	<p>5.4.1. Ակադեմիայի գործունեության ֆինանսական պլանավորման գործընթացի կատարելագործում՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակաուղղված բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների 5.5.1. Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին շահառուների մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում 5.7.1. Միջոցառումների կազմակերպման դահլիճի վերանորոգում և կահավորում 5.7.2. Ուսումնական գործընթացի կազմակերպման որակի պահանջները բավարարող նյութատեխնիկական պայմանների</p>

կառուցակարգերի բարելավում և հաշվետվությունների ժամանակին հրապարակում		հոլովակների, ռադիո-ատոլիոհոլովակների պատրաստման միջոցով թիրախային լսարանի ներգրավում 5.6.1. Հաստիքացուցակի ձևավորման գործընթացի բարելավում և հաստիքների օգտագործման արդյունավետության բարձրացում	ապահովում Ակադեմիայում 5.7.3. Ակադեմիայում կենսագործունեության անվտանգության պահանջների իրականացում
--	--	--	--


ԽՆԴԻՐ 5.1. Ակադեմիայի ֆինանսական մուտքերի բազմազանեցում. ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքի ապահովում՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները

Նախատեսված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>5.1.1. ֆինանսական միջոցների ներհոսքի ապահովում և դրանց աղբյուրների բազմազանեցում՝ Ակադեմիայի զարգացման կարիքներին համապատասխան Արտաբյուջետային միջոցների աղբյուրների և ծավալի ընդլայնում՝ ֆինանսական աղբյուրների ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմամբ</p> <p>Կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների ոլորտներում հայտարարվող միջազգային դրամաշնորհային ծրագրերին Ակադեմիայի մասնակցության ակտիվացում</p> <p>Նվիրատվությունների, բարեգործական մասհանումների միջոցով լրացուցիչ միջոցների ներգրավում</p>	<ol style="list-style-type: none"> 1. 2020 թվականի հունվարի 23-ին Վարչապետի աշխատակազմի հետ կնքվել է N 01 «Պետության կողմից հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրման մասին» և N 02 «Պետության կողմից հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողներին կրթաթոշակի տրամադրման մասին» պայմանագրերը՝ «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի 1919-Ն որոշմամբ սահմանված «1111» «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր» ծրագրի «12005» «Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում» և «12002» «Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ բուհական հաստատություններում» միջոցառումների իրականացման համար: 2. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության պետական կոմիտեի հետ 2020 թվականի հունվարին 24-ին կնքվել է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» ֆինանսավորման N 11-41/1 պայմանագիրը: 3. ՀՀ ԿԳՄՍՆ գիտության պետական կոմիտեի կնքված պայմանագրերի շրջանակներում իրականացվում է թվով 3 գիտական թեմաների ֆինանսավորում: 4. Մուտքեր LNSS միջազգային ծրագրից 5. Մուտքեր առկա, հեռակա և հեռավար ուսուցման ձևով սովորող մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների ուսման վճարներից 6. Մուտքեր թեմատիկ վճարովի վերապատրաստումներից 7. Մուտքեր «Հանրային կառավարում» ամսագրում հոդվածների տպագրման համար վճարներից

8. Մուտքեր 2020-2021 ուս.տարվա դիմորդների ընդունելության քննությունների մասնակցության վճարներից
9. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ 2020թ. մայիսի 11-ին կնքվել է «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման տասնչորսերորդ միջոցառման շրջանակում 2019/2020 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ուսման վարձի փոխհատուցման մասին» N-17 նվիրաբերության պայմանագիրը՝ թվով 56 ուսանողի 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի վարձավճարը փոխհատուցելու համար:
10. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից փոխահատուցվել է նաև թվով 66 ուսանողի վարձավճար:
11. Ֆինանսական աջակցություն «Հրայր և Աննա Հովնանյան» հիմնադրամից՝ Ակադեմիայի թվով 9 մագիստրանտի:



Ակադեմիայի 2020 թվականի բյուջետային և արտաբյուջետային միջոցներ



Ակադեմիայի բյուջեպային միջոցների մուտքեր

ԽՆԴԻՐ 5.2. Ընդունելության գործընթացում մարքեթինգային բազմազան գործիքների ներդրում և զարգացում՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով

Նախատեսված գործողություն | **Իրականացված գործողության արդյունք**

5.2.1. Ընդունելության աջակցման և մարքեթինգի ամենամյա գործող հանձնաժողովի ստեղծում և դրա շրջանակներում արտաքին միջավայրային վերլուծության իրականացում

Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ որոշում կայացվեց 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպել առցանց՝ էլեկտրոնային եղանակով:
 Մշակվել է 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման ժամանակավոր կարգ, համաձայն որի, համաճարակային իրավիճակով պայմանավորված, Ակադեմիան ժամանակավորապես դադարեցրել է դիմորդներից թղթային տարբերակով դիմումների և փաստաթղթերի ընդունումը և այն իրականացրել է առցանց եղանակով:
 Ակադեմիայի Paara.am կայքում ստեղծվել է «**Մագիստրատուրայի առցանց ընդունելություն**» էլեկտրոնային համակարգ (<https://paara.am/home/dimord/yndunelutyun/>), որի միջոցով իրականացվել է դիմում-հայտերի ընդունումը:
 Ամբիոնների ՄԿԾ համակարգողների կողմից անցկացվել է ամենօրյա խորհրդավություն դիմորդների հետ: Խորհրդատվություն է տրամադրվել դիմում-հայտի լրացնելու ձևի, փաստաթղթերն ուղարկելու ձևի, բազային մասնագիտության համապատասխանության և այլ հարցերի շուրջ:

5.2.2. Ակադեմիայի ընդունելության առկա պահանջների ուսումնասիրություն (քննությունների ցանկ, մրցույթի կարգ) և, ըստ անհրաժեշտության, առավելագույն ճկունություն,

Հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2020-2021 ուսումնական տարվա առկա ուսուցման մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման ժամանակավոր կարգը գիտական խորհրդի 2020 թվականի մայիսի 18-ի նիստում (Արձանագրություն N° 7)

օբյեկտիվ մրցակցություն
ապահովող համալիր
փոփոխությունների
իրականացում


Դիմորդի ուղեցուց

Դիմորդների թվի աճ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌՑԱՆՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

<https://paara.am/home/dimord/yndunelutyun/>

2018-2021 տարիների մագիստրատուրայի առկա, հեռակա և հեռավար ուսուցման ընդունելության քննությունների արդյունքների համեմատական վերլուծություն



Մագիստրատուրայի առկա, հեռակա և հեռավար ուսուցման ընդունելության դիմորդների թվաքանակը՝ ըստ ուսումնական տարիների

5.2.3. Նոր մոտեցումների կիրառում Ակադեմիայի ընդունելության գովազդարշավում՝ գովազդային տեխնոլոգիաների, հաղորդակցության ժամանակակից միջոցների լայն օգտագործմամբ
Ըստ պահանջի՝ ֆիլմերի նկարահանում, ցուցադրություն (տարեկան՝ 1 ֆիլմ)


Գովազդային արշավներն իրականացվում են պաշտոնական կայքի համապատասխան կայքէջերում և «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում համապատասխան նյութերի պատրաստմամբ, տեղադրմամբ և տարածմամբ:

5.2.4. Կրթական ծրագրերի, դրանց վարձավճարների, ընդունելության անցկացման կարգի, դիմորդներին հետաքրքրող

ՀՀ-ում կորոնավիրուսային հիվանդության հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակով պայմանավորված որոշում է կայացվել 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպել առցանց՝ էլեկտրոնային եղանակով:

<p>հարցերի հիման վրա կազմվող տեղեկատվական թուուցիկներ, տեսահոլոմներ, տեղեկատվական հոլովակների, ռադիո-աուդիոհոլովակների պատրաստման միջոցով թիրախային լսարանի ներգրավում</p>	<p>Ստեղծվել է 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման ժամանակավոր կարգ, համաձայն որի համաճարակային իրավիճակով պայմանավորված՝ Ակադեմիան ժամանակավորապես դադարեցրեց դիմորդներից թղթային տարբերակով դիմումների և փաստաթղթերի ընդունումը և այն իրականացրեց առցանց եղանակով:</p> <p>Ակադեմիայի Paara.am կայքում ստեղծվել է «Մագիստրատուրայի առցանց ընդունելություն» էլեկտրոնային համակարգ (https://paara.am/home/dimord/yndunelutyun/), որի միջոցով իրականացվեց դիմում-հայտերի ընդունումը:</p> <p>Ընդունելության ընդունող հանձնաժողովի աշխատանքները.</p> <ul style="list-style-type: none"> ⇒ դիմորդներին լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու նպատակով հարթակում տեղադրվեց յուրաքանչյուր կրթական ծրագրի համառոտ նկարագիրը, առարկաների ցանկը, կրթական վերջնարդյունքները, հետադարձ կապի հեռախոսահամարները, ⇒ պատրաստվել են ընդունելության գործընթացին անհրաժեշտ փաստաթղթեր, ձևանմուշներ, կազմվել են գրանցամատյաններ, ⇒ կազմակերպվել են առցանց ընդունելության աշխատանքները, դիմորդների հետ փորձնական առցանց հանդիպումներ, տեխնիկական խոչընդոտները վերացնելու նպատակով, ⇒ ակտավորվել և անձնակազմի կառավարման բաժին է ներկայացվել Ակադեմիա ընդունված դիմորդների անձնական գործերը, <p>արխիվ են հանձնվել Ակադեմիայի 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության փաստաթղթերի փաթեթը, մրցույթից դուրս մնացածների անձնական գործերը:</p> <p style="text-align: center;">Ընդունելություն https://paara.am/home/dimord/yndunelutyun/ Հեռավար ուսուցում՝ https://paara.am/home/dimord/distance-learning-admission/ Կրթական ծրագրեր՝ https://paara.am/home/dimord/newprogram/ Հարցաշար՝ https://paara.am/home/dimord/harcashar/ Թեստի նմուշ՝ https://paara.am/home/dimord/test-example/ Հաճախ տրվող հարցեր՝ https://paara.am/home/dimord/hajax-trvox-harcer/</p>
ԽՆԴԻՐ 5.3. Լրացուցիչ կրթական ծրագրերից ֆինանսական մուտքերի ավելացում	
Նախադեսված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>5.3.1. Ակադեմիայի լրացուցիչ և շարունակական կրթության համակարգի զարգացում և ընդլայնում</p> <p>Պատվիրատու կազմակերպությունների և գերատեսչությունների հետ պայմանագրային հարաբերությունների զարգացում՝ սեփական կադրերի պատրաստման և</p>	<p>Ակադեմիայում կազմակերպվել է թեմատիկ վճարովի վերապատրաստման դասընթաց, մասնակիցների վճարներ:</p> <p>Սեփական կադրերի պատրաստման և մասնագիտական զարգացման նպատակով, Ակադեմիայի Ֆինանսա-տնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության աշխատակիցները մասնակցել են «Հաշվապահական հաշվառում և հարկյին օրենսդրություն» վերապատրաստման դասընթացին:</p>

մասնագիտական զարգացման նպատակով	
ԽՆԴԻՐ 5.4. Ֆինանսական պլանավորման համակարգի զարգացում, ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում	
Նախատեսված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>5.4.1. Ակադեմիայի գործունեության ֆինանսական պլանավորման գործընթացի կատարելագործում՝ ապահովելով ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակաուղղված բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների</p> <p>Բյուջետային համակարգի կատարելագործում՝ ֆինանսական ռեսուրսների արդյունավետ ու թափանցիկ բաշխում բոլոր բնագավառների կառավարման գործընթացներով, յուրաքանչյուր տարի</p>	<p>2020 թ. հունվարի 8-ի Վարչապետի աշխատակազմի կողմից հաստատվել է Ակադեմիայի 2020թ. ծախսերի նախահաշիվը՝ ըստ մուտքային և ծախսային տնտեսագիտական դասակարգման հոդվածների, որը ներառում է ինչպես ՀՀ պետական բյուջեից տրվող, այնպես էլ արտաբյուջետային միջոցները: Նախահաշիվն իր մեջ ներառում է ծախսային այն ուղղությունները, որոնք հնարավորություն կտան արդյունավետ և նպատակաուղղված օգտագործել ռեսուրսները:</p>
<p>5.4.2. Ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգի և նյութական արժեքների հաշվառման գործընթացի՝ ժամանակի պահանջներին ու խնդիրներին համահունչ պլանավորում կատարելագործում</p>	<p>2020թ. հունվարի 30-ին հաստատվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գնումների պլանը/ներառյալ փոփոխությունները/՝ օրենքով սահմանված կարգով գնման ընթացակարգեր կազմակերպելու նպատակով, http://www.gnumner.am/website/images/original/Gn.plan.pdf</p> <p>Ակադեմիայի կարիքների համար կազմակերպվել են ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգեր, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> • <i>Գրասենյակային ապրանքների և նյութերի ձեռքբերում</i> • <i>Տնփեսական ապրանքների և նյութերի ձեռքբերում</i> • <i>Համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերում</i> • <i>Վառելիքի ձեռքբերում</i> • <i>Ներկայացուցչական ծառայությունների ձեռքբերում:</i> • <i>Տպագրական աշխատանքների ձեռքբերում</i> • <i>Վարչական սարքավորումների ձեռքբերում</i> • <i>Տեեկափոխական ծառայությունների ձեռքբերում</i> • <i>Կոմունալ ծառայությունների ձեռքբերում և այլն:</i> <p>Տարվա ընթացքում գնումների պլանում կատարվել են փոփոխություններ՝ Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության, ռազմական դրության պայմաններում կարիքների բացահայտման և առաջնահերթությունների հետ կապված:</p> <p>ՀՀ Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել Ակադեմիայի 2019 թվականի տարեկան և 2020թ. եռամսյակային հաշվետվությունները՝ ՀՀ ՖՆ 2017թ. հունվարի 30-ի թիվ 27-Ն հրամանով հաստատված ձևաչափերով, այդ թվում.</p>

	<p>- ֆինանսական հաշվետվություններ՝ Ձև 1,2,3,4,5, - ընդլայնված գործառնությունների մատյանը և շրջանառության տեղեկագիրը (Excel տարբերակով),</p> <p>- ՀՀ ՖՆ 2013թ. փետրվարի 4-ի թիվ 104-Ն հրամանով հաստատված ֆինանսական հաշվետվությունների փաթեթը՝ ձև 1,2,3,4,Հ-3,Հ-8 (բյուջետային և ա/բյուջետային),</p> <p>- Շահութահարկի հաշվետվություն 2019թ. համար,</p> <p>- ՀՀ վիճ.պետական ծառայության խորհրդի 2018թ հոկտեմբերի 19-ի թիվ 13-Ն որոշման համաձայն հաստատված հաշվետվությունների փաթեթը՝ ՁեՎ 1-ծառայություններ, ՁեՎ 1-գիտություն, ՁեՎ 1-ԳՄ, ՁեՎ 4-ԳՄ, ՁեՎ 11-ՀՄ, ՁեՎ 1-Ա, ՁեՎ ԹԻՎ 1-կադրերի ուսուցում</p> <p>- Գույքահարկի հաշվարկի հաշվետվություն,</p> <p>- Եկամտային հարկի, ԱԱՀ-ի հաշվետվություններ</p> <p>Վարչապետի աշխատակազմ է ներկայացվել նաև 2021 թվականի Միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտը և 2021 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը, միջոցառումների ծրագիրը, որ ֆինանսական ցուցանիշները:</p>								
<p>5.4.3.Ռեսուրսախնայողական քաղաքականության ապահովում</p>	<p>Ակադեմիայի ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից առաջնահերթ խնդիրներ են նաև ռեսուրսների արդյունավետ կառավարումն ու ռեսուրսախնայողության քաղաքականության հետևողական իրականացումը:</p> <p>2020թ., հաշվի առնելով աշխարհում և ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N 298-Ն որոշմամբ հայտարարվել է արտակարգ դրություն: Քանի որ Ակադեմիան հանդիսանում է ուսումնական հաստատություն, այդ ժամանակահատվածում իր գործունեությունն իրականացրել է հեռավար ձևաչափով, ինչի արդյունքում առաջացել է ռեսուրսախնայողության մեծ ծավալներ, այդ թվում գազի, էլ.էներգիայի, կոմունալ և կապի ծառայությունների օգտագործման ծավալի նվազում:</p> <p>Ակադեմիայի դրամական միջոցների մնացորդը առ 31.12.2020 թ.՝ 79 միլիոն 027,9 հազար դրամ, այդ թվում դրամային հաշիվ - 71 միլիոն 015.8 հազար դրամ արտարժույթային հաշիվ - (14 729,39 €) 8 միլիոն 012.1 հազար դրամ</p>  <table border="1"> <thead> <tr> <th>Year</th> <th>Remaining Funds (AMD)</th> </tr> </thead> <tbody> <tr> <td>2018 թ.</td> <td>38,519,200</td> </tr> <tr> <td>2019 թ.</td> <td>71,307,300</td> </tr> <tr> <td>2020 թ.</td> <td>79,027,900</td> </tr> </tbody> </table>	Year	Remaining Funds (AMD)	2018 թ.	38,519,200	2019 թ.	71,307,300	2020 թ.	79,027,900
Year	Remaining Funds (AMD)								
2018 թ.	38,519,200								
2019 թ.	71,307,300								
2020 թ.	79,027,900								

ԽՆԴԻՐ 5.5. Ակադեմիայի իրավական դաշտի և կառավարման համակարգի կատարելագործում	
Նախատեսված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>5.5.1. Իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացին շահառուների մասնակցայնության ապահովման արդյունավետության բարձրացում</p> <p>Իրավական ակտերի լրամշակում՝ կարևորելով Ակադեմիայի ստորաբաժանումների հաշվետվողականության բարձրացումը</p> <p>Ակադեմիայի խորհրդի, գիտական խորհրդի և կառավարման մյուս մարմինների ներդաշնակ գործունեության ապահովում, որոշումների ընդունման և կատարման աստիճանակարգային հստակ համակարգի ձևավորում՝ ժողովրդավարական սկզբունքների կիրառմամբ</p>	<p>Որակի ապահովման կենտրոնը պատասխանատու կատարողներին պատշաճ իրազեկել է իրականացվող միջոցառումների ժամկետների մասին, ինչպես նաև յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 15-օրյա ժամկետում Ակադեմիայի ռեկտորին է ներկայացրել իրականացված միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն (հիմք՝ Ակադեմիայի ռեկտորի 2020 թվականի մարտի 2-ի-ի N° 51/1-Ա հրամանի 2-րդ կետ):</p> <p>Որակի ապահովման կենտրոնը մշակել է 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների արդյունքների վերաբերյալ հաշվետվության ձևաչափը և լրացման ուղեցույցը: 2020 թվականի առաջին կիսամյակում իրականացված միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը կազմել է 60 էջ: Մշակվել է նաև 2020 թվականի երկրորդ կիսամյակում իրականացված միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը:</p> <p>Կառավարման գործընթացի որակի ապահովման ներքոնշյալ փաստաթղթային հենքի ստեղծման շնորհիվ որոշակի կանոնակարգվել են կառավարման գործընթացները, մասնագիտական կրթական ծրագրերի և դասավանդման, ուսումնառության և գնահատման, ինչպես նաև միջազգայնացման և սոցիալական համագործակցության որակը:</p> <p>Մշակվել են հետևյալ փաստաթղթերը (մեկ տասնյակից ավելի).</p> <ul style="list-style-type: none"> □ Ակադեմիայի 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ծրագիր, հաստատվել է Գիտական խորհրդի 2020 թվականի փետրվարի 28-ի որոշմամբ (Արձանագրություն N° 2), Ռեկտորի 2020 թվականի մարտի 2-ի-ի N° 51/1-Ա հրաման, https://paara.am/wp-content/uploads/2013/11/4-ՆՈՐ-ՌԾ-բխող-միջոցառումների-ծրագիր-2020-2024-թթ..pdf □ ««ՀՀ պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգ», հաստատվել է Գիտական խորհրդի 2020 թվականի հունվարի 31-ի նիստում (Արձանագրություն N° 1), Ռեկտորի 2020 թվականի փետրվարի 1-ի N° 30-Ա հրաման, https://paara.am/wp-content/uploads/2012/05/1-Հրաման_աշխատակարգ-որակ.pdf <p>Ապահովված է Ակադեմիայի գիտական խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 31-ի (Արձանագրություն N° 109) որոշմամբ հաստատված Ակադեմիայի որակի ապահովման հայեցակարգի 28-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթը:</p> <p>Որակի ապահովման ընթացակարգերի և չափանիշների համապատասխանությունն ընդունված չափորոշիչներին գնահատելու, Ակադեմիայի գիտական խորհրդի հաստատմանը որակի ապահովման և գնահատման ընթացակարգերի, կրթական ծրագրերի չափորոշիչների ու ուսումնական պլանների, որակի ապահովման կանոնակարգային փաստաթղթերի երաշխավորումն</p>

	<p>ապահովելու նպատակով ստեղծվել է Ակադեմիայի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողով:</p> <p>☐ «Բենչմարքինգի (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն) իրագործման ընթացակարգ», հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի ապրիլի 29-ի նիստում (Արձանագրություն N° 5), Ռեկտորի 2020 թվականի ապրիլի 30-ի N°82-Ա հրաման</p> <p>Բենչմարքինգի (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն) իրագործման ընթացակարգը սահմանում է բենչմարքինգի քաղաքականությունը, էությունը, սկզբունքները, նպատակները, ինչպես նաև կարգավորում է բենչմարքինգի պլանավորման, անցկացման, արդյունքների հրապարակման և դրանց հիման վրա նոր մոտեցումների ու գործարկման մեթոդների մշակմանն առնչվող հարաբերությունները: Ընթացակարգը բաղկացած է 12 բաժնից: Ընթացակարգում ներկայացվում են կրթության ոլորտում «բենչմարքինգի» էությունը, նպատակը, սկզբունքները և միջազգային փորձը, ինչպես նաև Ակադեմիայում ներդրման քաղաքականության մշակման հիմնավորվածությունն ու անհրաժեշտությունը:</p> <p>☐ «Կրթական ծրագրերի մշտադիտարկման կարգ», հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի ապրիլի 29-ի նիստում (Արձանագրություն N° 5), Ռեկտորի 2020 թվականի ապրիլի 30-ի N° 80-Ա հրաման</p> <p>☐ «Կրթական ծրագրերի պարբերական վերանայման և վերահաստատման կարգ», հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի ապրիլի 29-ի նիստում (Արձանագրություն N° 5), Ռեկտորի 2020 թվականի ապրիլի 30-ի N° 80-Ա հրաման</p> <p>☐ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման ժամանակավոր կարգ», հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի մայիսի 18-ի նիստում (Արձանագրություն N° 7)</p> <p>☐ «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում առցանց քննությունների անցկացման ժամանակավոր կարգ», հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի նիստում (Արձանագրություն N° 12)</p> <p>Կարգը կանոնակարգում է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում քննությունների անցկացման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի պայմաններում:</p>
--	--

	<p> <input type="checkbox"/> «ՀՀ պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հեռավար ուսուցման հարթակի տեղեկատվական բազայի օգտագործման կարգ», հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի մարտի 27-ի նիստում (Արձանագրություն № 3), Ռեկտորի 2020 թվականի մարտի 30-ի N 70-Ա հրաման </p> <p> <input type="checkbox"/> «ՀՀ պետական կառավարման ակադեմիայում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ աշխատանքների կատարման վրա ծախսվող ժամանակի պլանավորման և հաշվառման նորմերը», հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի նիստում (Արձանագրություն №13) </p> <p> <input type="checkbox"/> ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնների տարեկան հաշվետվությունների ձևաչափ, հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի հուլիսի 13-ի նիստում (Արձանագրություն № 11) </p> <p> <input type="checkbox"/> ««Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հեռավար ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ», հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի հունվարի 30-ի նիստում (Արձանագրություն № 1) </p> <p> Որակը էապես կախված է Ակադեմիայում ձևավորված մշակույթից, որը ենթադրում է վերլուծական գործունեություն, թափանցիկություն և շարունակական բարելավում: Ուստի Ակադեմիայում կարևորում է որակի ներքին ապահովման կայուն կառուցակարգեր ապահովող մշակույթի դերը, ինչպես նաև ուսումնառության որակը: </p> <p> Այս համատեքստում մշակվել է երկու ձեռնարկ: </p> <ul style="list-style-type: none"> <input type="checkbox"/> Հեռավար/առցանց ուսուցում. մեթոդական ուղենիշներ դասախոսների համար <input type="checkbox"/> «Ուսանողի ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացում» ուսանողական ձեռնարկ <p> 2-րդ կիսամյակում մշակված փաստաթղթեր. «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում առցանց քննությունների անցկացման ժամանակավոր կարգ», հաստատվել է գիտական խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի նիստում (Արձանագրություն № 12), https://paara.am/wp-content/uploads/2012/05/Քննությունների-անցկացման-կարգ-վերանայված-տարբերակ-Որակի-ապահովման-կենտրոնի-կողմից-1.pdf </p> <p> «ՀՀ պետական կառավարման ակադեմիայում պրոֆեսորադասախոսական կազմի կողմից ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ </p>
--	--

	<p>աշխատանքների կատարման վրա ծախսվող ժամանակի պլանավորման և հաշվառման նորմերը», հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 30-ի նիստում (արձանագրություն N^o13), https://paara.am/wp-content/uploads/2012/05/Ժամային-նորմեր-2020-վերջնական.pdf</p> <p>«Ա պետական կառավարման ակադեմիայի ամբիոնների տարեկան հաշվետվությունների ձևաչափ, հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի հուլիսի 13-ի նիստում (Արձանագրություն N^o 11), https://paara.am/wp-content/uploads/2012/05/Ամբիոնի-հաշվետվության-ձև-31.07.2020---DRAFT-1.pdf</p>
<p>ԽՆԴԻՐ 5.6. Կազմակերպական կառուցվածքի օպտիմալացում, գործառույթների հստակեցում</p>	
<p>Նախադրված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>5.6.1. Հաստիքացուցակի ձևավորման գործընթացի բարելավում և հաստիքների օգտագործման արդյունավետության բարձրացում</p>	<p>Հստակեցվել է Ակադեմիայի կառուցվածքը. Կառուցվածքի գծապատկեր. https://paara.am/wp-content/uploads/2012/04/Structure-PAARA.pd</p>
<p>5.6.2. Ակադեմիայի հաշվետվությունների կազմման բովանդակային և ընթացակարգային կառուցակարգերի բարելավում և հաշվետվությունների ժամանակին հրապարակում</p> <p>Ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը չափող ցուցանիշների և աուդիտի իրականացման ընթացակարգերի մշակման ուղղությամբ աշխատանքների իրականացում</p> <p>Ակադեմիայի տարեկան հաշվետվության մշակում</p>	<p>Որակի ապահովման կենտրոնը համաձայն ռեկտորի 2020 թվականի մարտի 2-ի-ի N 51/1-Ա հրամանի դրույթների՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 15-օրյա ժամկետում Ակադեմիայի ռեկտորին պետք է ներկայացնի իրականացված միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն:</p> <p>Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել է ամբիոնի տարեկան հաշվետվության ձևաթուղթը: Ամբիոնների տարեկան հաշվետվությունների ձևաչափը հաստատվել է Ակադեմիայի գիտական խորհրդի 2020 թվականի հուլիսի 13-ի նիստում (Արձանագրություն N^o 11), https://paara.am/wp-content/uploads/2012/05/Ամբիոնի-հաշվետվության-ձև-31.07.2020---DRAFT-1.pdf.</p> <p>Որակի ապահովման կենտրոնը մշակել է 2019-2024 թթ. ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների արդյունքների վերաբերյալ հաշվետվության ձևաչափը և լրացման ուղեցույցը: 2020 թվականի առաջին կիսամյակում իրականացված միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը կազմել է 60 էջ: Մշակվել է նաև 2020 թվականի երկրորդ կիսամյակում իրականացված միջոցառումների ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը:</p> <p>Որակի ապահովման կենտրոնը մշակել է Ակադեմիայի 2020 թվականի գործունեության հաշվետվությունը և այն համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 4-ի N 995-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կանոնադրության 19-րդ կետի «գ» ենթակետի՝ ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ /ռեկտորի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N01/631 գրություն/:</p> <p>2020թ. տարեկան հաշվետվությունը ներկայացվել է նաև Ակադեմիայի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի նիստում:</p>

	<p>Ակադեմիայի տարեկան հաշվետվությունները հրապարակվել են պաշտոնական կայքէջում, https://paara.am/home/pastatxter-2/hashvetvutyunner/.</p>
<p>ԽՆԴԻՐ 5.7. Շենքային և տեխնիկական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում</p>	
<p>Նախատեսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>5.7.2. Ուսումնական գործընթացի կազմակերպման որակի պահանջները բավարարող նյութատեխնիկական պայմանների ապահովում Ակադեմիայում</p> <p>Միջանցքների, սենյակների և սանհանգույցների ընթացիկ նորոգման ու ներքին հարդարման, վերանորոգման աշխատանքներ</p>	<p>Վերանորոգվել են Ակադեմիայի հիմնական մասնաշենքի 2-րդ և 3-րդ հարկերի միջանցքները, տեղադրվել են նոր լեդ լուսատուներ, կատարվել է մալուխների տեղադրում պատյանների մեջ և դռների յուղաներկում:</p> <p>Իրականացվել է Ակադեմիայի հիմնական մասնաշենքի հակահրդեհային տարհանման նոր դռան բացում և կահավորում: Մաքրվել են հիմնական մասնաշենքում առկա նկուղները, տեղափոխվել է կենցաղային և շինարարական աղբը:</p> <p>Բարեկարգվել է Ակադեմիայի արտաքին տարածքը և տեղադրվել է արտաքին տեսախցիկ:</p> <p>Կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված՝ ձեռք են բերվել հատուկ միջոցներ և ախտահանվել են համապատասխան տարածքները:</p> <p>Իրականացվել է Ակադեմիայի կաթսայատան պրոֆիլակտիկ աշխատանքներ և որոշ հանգույցների վերանորոգում՝ ջեռուցման սեզոնին ընդառաջ:</p> <p>Հսկողություն է իրականացվել ակադեմիայի մասնաշենքերի, էլեկտրաէներգիայի, բնական գազի մատակարարման և դրանց խնայողաբար օգտագործման, ինչպես նաև պահակային ծառայության կողմից իրականացվող աշխատանքների նկատմամբ:</p> <p>Կատարվել են Ակադեմիայի մասնաշենքերի և արտաքին տարածքների, կանաչ գոտիների մաքրման, ծառերի էտման ու պահպանման աշխատանքներ:</p> <p>Կրթության որակի խնդիրների բացահայտման և մատուցվող ծառայություններից բավարարվածության աստիճանը գնահատելու նպատակով իրականացվել են հարցումներ.</p> <p>➤ Դասախոսների շրջանում 2020 թվականին անցկացված հարցման վերաբերյալ (տե՛ս դասախոսների շրջանում կրթության որակի ապահովման համակարգի վերաբերյալ անցկացված հարցման արդյունքների մասին հաշվետվություն, 68 էջ)</p> <p>➤ 2019-2020 թթ. ուսումնական տարվա շրջանավարտների շրջանում անցկացված հարցման արդյունքների մասին (տե՛ս 2019-2020 թթ. ուսումնական տարվա շրջանավարտների շրջանում անցկացված հարցման արդյունքների մասին հաշվետվություն, 50 էջ)</p> <p>Հարցումների արդյունքներն ամփոփվել են Որակի ապահովման կենտրոնի կողմից, քննարկվել ամբիոնների նիստերում և ներկայացվել են առանցքային շահակիցներին:</p> <p>Շարունակվում են հարցումները ուսանողների շրջանում, որին առկա, հեռակա, հեռավար ուսուցման համակարգերից մասնակցել են բոլոր կրթական ծրագրերով ուսանողներ /արդյունքները կներկայացվեն գիտական խորհրդի նիստում 2021 թ. փետրվարին/:</p>
<p>5.7.3. Ակադեմիայում կենսագործունեության</p>	<p>Հեռավար ուսուցման գործընթացի ապահովում հարթակների սերվերային համակարգերի արդյունավետ և օպերատիվ</p>

անվտանգության պահանջների իրականացում	կառավարման շնորհիվ: Համավարակի պայմաններում ուսումնական պրոցեսը անխափան կազմակերպում է հեռավար ձևաչափով՝ Google G Suite համակարգի միջոցով:
Ուսումնական մասնաշենքերի հսկողության ենթակառուցվածքի զարգացում	Համավարակի պայմաններում առցանց ընդունելության համակարգի ներդրում: Ինտերնետ ծածկույթի ապահովում Ակադեմիայի ողջ տարածքում, վերահսկողություն անվտանգության տեսախցիկների 24/7 ռեժիմով գրանցումների միջոցով:

ՆՊԱՏԱԿ 6. Միջազգայնացման գործընթացի և միջազգային համագործակցության ընդլայնում և արդյունավետության բարձրացում, 7 խնդիր և 12 միջոցառում/գործողություն

Կատարված միջոցառում	Չկատարված միջոցառում	Հրատապ միջոցառում	Ընթացքի մեջ միջոցառում
4	0	3	5

ՆՊԱՏԱԿ 6. Միջազգայնացման գործընթացի և միջազգային համագործակցության ընդլայնում և արդյունավետության բարձրացում

<p>6.1.1. Միջազգայնացման հստակ քաղաքականության մշակում՝ որակական և քանակական ցուցիչներով ու ժամանակացույցով</p> <p>6.1.2. Ակադեմիայի համագործակցության շրջանակների ընդլայնում և բազմազանեցում արտասահմանյան բուհերի և միջազգային կառույցների հետ՝ կիրառելով համագործակցության տարբեր ձևաչափեր</p> <p>6.1.3. Միջազգային դոնոր և դրամաշնորհատու կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունների ուսումնասիրում, ֆինանսավորում ստանալու նպատակով ծրագրերի մշակում և ներկայացում</p>		<p>6.6.1. Միջազգային ճանաչում ունեցող գիտական հանդեսներում հրապարակումների առկայություն</p> <p>6.7.1. Օտար լեզվով (անգլերենով) առարկայական ծրագրերի մշակում</p> <p>6.7.2. Անգլերենով դասավանդողների խրախուսման կառուցակարգի մշակում և կիրառում</p>	<p>6.2.2. Ներգնա և արտագնա պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի ներկայացուցիչների շարժունության կազմակերպում</p> <p>6.3.1. Մեկ կրթական ծրագրի (MBA կամ MPA) միջազգային հավատարմագրման գործընթացի նախապատրաստում</p> <p>6.4.1. Համատեղ և/կամ կրկնակի դիպլոմ տրամադրող կրթական ծրագրի մշակում Աշխատանք համատեղ մագիստրոսական և/կամ ասպիրանտական ծրագրերի ստեղծման և որակավորման</p>
--	--	---	---

<p>6.2.1. Ներգնա և արտագնա սովորողների շարժունության ապահովում</p>			<p>աստիճանների համատեղ շնորհման ուղղությամբ 6.5.1. «Հանրային կառավարում» գիտական հանդեսի բարձր վարկանիշ ունեցող գիտական միջազգային պարբերականների ցանկում ներառելու աշխատանքների իրականացում 6.7.3. Նոր տեխնոլոգիաների կիրառում օտար լեզվի դասավանդման գործընթացում</p>
---	--	--	---

ԽՆԴԻՐ 6.1. Ակտիվ մասնակցություն միջազգային կրթական և/կամ հետազոտական ծրագրերին	
Նախադեպած գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>6.1.1. Միջազգայնացման հստակ քաղաքականության մշակում՝ որակական և քանակական ցուցիչներով ու ժամանակացույցով</p>	<p>Մշակվել և հաստատվել Ակադեմիայի միջազգայնացման հայեցակարգը, հաստատված է ՀՀ պետական կառավարման սկադեմիայի գիտական խորհրդի 2021 թվականի հունվարի 29-ի նիստում (արձանագրություն № 1), https://paara.am/wp-content/uploads/2012/05/Հրաման-ՀՀ-ՊԿԱ-միջազգայնացման-հայեցակարգ_03.02.2021.pdf:</p>
<p>6.1.2. Ակադեմիայի համագործակցության շրջանակների ընդլայնում և բազմազանեցում արտասահմանյան բուհերի և միջազգային կառույցների հետ՝ կիրառելով համագործակցության տարբեր ձևաչափեր</p>	<p>Համագործակցության պայմանագրերի կնքման համար բանակցություններ են վարվել և պայմանագրի համատեղ նախագիծ է պատրաստվել և կնքվել Խարկովի պոլիտեխնիկական ինստիտուտի հետ, փոխըմբռնման հուշագրեր են ստորագրվել Սիրիայի Մանարա համալսարանի և Հնդկաստանի Ուտար Պրադեշի Շրի Վենկատեշվարա համալսարանի հետ: Ժամկետների լրանալու պատճառով պայմանագրեր են վերանայվել և վերակնքվել Ուրալի պետական տնտեսագիտական համալսարանի և Մորդովիայի Ն. Պ. Օգարյովի անվան ազգային հետազոտական պետական համալսարանի հետ:</p>
<p>6.1.3. Միջազգային դոնոր և դրամաշնորհատու կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունների ուսումնասիրում, ֆինանսավորում ստանալու նպատակով ծրագրերի մշակում և ներկայացում</p>	<p>ԵՄ ֆինանսավորմամբ Էրազմուս+ ծրագրի «Բարձրագույն կրթության կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում մի շարք արդիական ոլորտների (միգրացիա, «Ապաստան համալսարանի» ստեղծում բուհում, բուհերի միջազգայնացում (անգլերենով ուսուցանվող կրթական ծրագրի ստեղծում՝ անգլերենով իրավիճակային խնդիրների և գործնական առաջադրանքների կիրառմամբ (EMI-English as a Medium of Instruction)), սկադեմիական գրագիտության կենտրոնների ստեղծում, արվեստի տարբեր ոլորտներում ձեռներեցության խթանման նպատակով ուսումնական մոդուլների պատրաստում և ուսուցում, սկադեմիական ազնվություն և հետազոտական բարեվարքություն, բուհերի դասախոսական կազմի</p>

	<p>մասնագիտական կոմպետենցիաների զարգացում, ուսուցման մեթոդների և ուսումնական պլանների հարամարեցում բնապահպանությանը և «կանաչ» արտադրությանը) շուրջ պատրաստել ենք ծրագրային փաթեթներ և դիմել թվով 6 նախագծի (որից 2-ը միայն հայաստանյան գործընկեր բուհերի ընդգրկմամբ, իսկ 4-ը՝ տարբեր երկրների բուհերի մասնակցությամբ նախագծեր են) և մեկ ծրագրի՝ «Ժան Մոնե» գործողության շրջանակում:</p> <p>Արդյունքում հավանության է արժանացել երկու ծրագրի՝ «Բարձրագույն կրթության կարողությունների զարգացման»՝ SMARTI (Կրթության ոլորտը, շարունակականությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով անգլերենով դասավանդման նորարարական մեթոդաբանության, մոտեցումների և գործիքների աջակցություն) ծրագիրը, և մեկ «Ժան Մոնե» ծրագրի (PROMOEU-Եվրոպագիտության խթանումը Հայաստանում), որը միտված է հայաստանյան բուհերում եվրոպագիտության ոլորտում հետազոտությունների իրականացմանը և դասընթացների մշակմանն ու ներդրմանը:</p>
ԽՆԴԻՐ 6.2. Դասախոսների, սովորողների և անձնակազմի շարժունության ընդլայնում	
Նախատեսված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>6.2.1. Ներգնա և արտագնա սովորողների շարժունության ապահովում</p>	<ul style="list-style-type: none"> • Ս.թ. սեպտեմբերին «ՀՖԿ» կրթական ծրագրի ուսանող Գևորգ Խաչատրյանը 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսանելու նպատակով մեկնել է Վիլնյուս՝ Միկոլաս Ռոմերիս համալսարան։ 2-րդ կիսամյակի համար նախատեսված էր մեկ ուսանողի շարժունության ծրագիր Միկոլաս Ռոմերիս համալսարանում, սակայն մրցույթ չի կայացել։ • Նախատեսված է 1 ուսանողի շարժունություն Միկոլաս Ռոմերիս համալսարան։ <p>«Հայտարարություններ» բաժնում տեղադրվել են ուսանողների և դասախոսների փոխանակման ծրագրերին վերաբերող հայտարարություններ։</p>
<p>6.2.2. Ներգնա և արտագնա պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի ներկայացուցիչների շարժունության կազմակերպում</p>	<ul style="list-style-type: none"> • Նախատեսված է 1 դասախոսի շարժունություն Բրաշովի Տրանսիլվանիա համալսարանում (Ռումինիա)։ • 2020 թ. հոկտեմբերին նախատեսված էր Արտաքին կապերի գծով պրոռեկտոր Թերեզա Խեչոյանի այցը Լիտվայի Միկոլաս Ռոմերիս համալսարան՝ «Հանրային կառավարում» և «Հանրային քաղաքականություն» կրթական ծրագրերով սովորող ուսանողներին մեկ շաբաթ դասախոսելու նպատակով, որը կրկին հետաձգվեց։
ԽՆԴԻՐ 6.3. Առնվազն մեկ կրթական ծրագրի միջազգային հավատարմագրում	
Նախատեսված գործողություն	Իրականացված գործողության արդյունք
<p>6.3.1. Մեկ կրթական ծրագրի (MBA կամ MPA) միջազգային հավատարմագրման գործընթացի նախապատրաստում</p>	<p>Գործընթացին նպաստելու նպատակով Ակադեմիան անդամակցում է Գործարարության կրթության եվրոպական խորհրդին (ECBE), ինչն առաջին քայլն է MBA կրթական ծրագրի միջազգային հավատարմագրման համար։</p> <p>Կառավարման ամբիոնը տանում է համապատասխան աշխատանքներ։</p>

<p>Կրթական ծրագրի համապատասխանություն որակի հիմնական համընդհանուր չափանիշներին՝ նպաստելով դրանց միջազգային ճանաչմանը:</p> <p>Որակի ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների բովանդակության խորացում՝ հիմնվելով արտաքին առավել բացարձակ և հիմնական չափորոշիչների վրա</p>	
<p>ԽՆԴԻՐ 6.4. Կրկնակի և/կամ համատեղ դիպլոմների շնորհմամբ կրթական ծրագրերի ներդրում</p>	
<p>Նախատեսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>6.4.1. Համատեղ և/կամ կրկնակի դիպլոմ տրամադրող կրթական ծրագրի մշակում</p> <p>Աշխատանք համատեղ մագիստրոսական և/կամ ասպիրանտական ծրագրերի ստեղծման և որակավորման աստիճանների համատեղ շնորհման ուղղությամբ</p>	<p>Հիտվայի Միկոլաս Ռոմերիս համալսարանի հետ մշակված «Էլեկտրոնային հանրային կառավարում» մասնագիտացմամբ համատեղ դիպլոմով կրթական ծրագիրը:</p> <p>Այն այս տարի Միկոլաս Ռոմերիս համալսարանի կողմից չխրախուսվեց՝ նախորդ 4 ուսումնական տարիներին Ակադեմիայի կողմից պահանջված թվով դիմորդներ չապահովելու պատճառով:</p> <p>Վերոնշյալ փոխըմբռման հուշագրերով նախատեսված գործողություն է, ինչը դեռ քննարկումների կարիք ունի:</p>
<p>ԽՆԴԻՐ 6.6. Միջազգային բարձր հղման ցուցանիշ ունեցող ամսագրերում Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի հրապարակումների ավելացմանը նպաստել /աջակցելը</p>	
<p>Նախատեսված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>6.6.1. Միջազգային ճանաչում ունեցող գիտական հանդեսներում հրապարակումների առկայություն</p>	<p>Ակադեմիայի ամբիոնի դասախոսները պատրաստել են «Պետական կառավարման էվոլյուցիան հետխորհրդային երկրներում. 1991-2021 թթ.» գիրքը, որը պարունակում է վերլուծական ակնարկներ՝ նվիրված 1991թ. Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության փլուզումից հետո ստեղծված երկրների պետական կառավարման համակարգերի զարգացմանը:</p> <p>Գիրքը պատրաստվել է տարբեր պետությունների առաջատար փորձագետների կողմից, որոնց թվում են պետական և մունիցիպալ կառավարման համար կադրերի պատրաստման առանցքային ուսումնական հաստատությունների ղեկավարները:</p> <p>Հրատարակությունը նախատեսված է պետական իշխանության մարմինների աշխատակիցների, գիտական աշխատողների, դասախոսների և ուսանողների, ինչպես նաև բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրվում են հետխորհրդային տարածքի երկրների պետականաշինության արդիական հարցերով:</p> <p>«Պետական կառավարման էվոլյուցիան հետխորհրդային երկրներում. 1991-2021 թթ.» գիրքը գրվել է ՌԴ Նախագահին առընթեր Ռուսաստանի ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ակադեմիայի նախաձեռնությամբ:</p>

	<p>Գրքի՝ Հայաստանին վերաբերող հատվածը առանձին հոդվածի տեսքով կիրառարակվի «Պետական ծառայություն» (Public Administration) ամսագրում:</p> <p>Նաև ձեռք է բերվում գրքի անգլալեզու տարբերակի հրապարակման համաձայնությունը հեղինակավոր Springer հրատարակչությունում:</p> <p>Գրքի շնորհանդեսը կայացել է Մոսկվայում՝ «Գայդարյան ֆորում-2021»-ի շրջանակում, https://gaidarforum.ru/ru/program/936/:</p> <p>Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրեր «Հումանիտար հետազոտությունների կենտրոն» ծրագրի շրջանակում ընդհանուր առմամբ հրատարակվել է 7 գիտական հոդված, պատրաստվել է տպագրության 6 գիտական հոդված: Ծրագրի շրջանակում գիտական աշխատողները հանդես են եկել դասախոսություններով, ինչպես նաև 20-ից ավելի զեկուցումներով միջազգային և տեղական գիտաժողովներում ու համաժողովներում:</p> <p>Ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվության մեջ պարտադիր կետ է դարձել հետազոտական գործունեության միջազգայնացման մասին զեկուցելը:</p>
<p>ԽՆԴԻՐ 6.7. Միջազգային բարձր հղման ցուցանիշ ունեցող ամսագրերում Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմի հրապարակումների ավելացմանը նպաստել /աջակցելը</p>	
<p>Նախադրված գործողություն</p>	<p>Իրականացված գործողության արդյունք</p>
<p>6.7.1. Օտար լեզվով (անգլերենով) առարկայական ծրագրերի մշակում</p>	<p>Անգլերենով դասավանդվում են հետևյալ առարկաները՝</p> <ul style="list-style-type: none"> • «Տնտեսագիտության սկզբունքները/Principles of Economics», դասախոս՝ Թերեզա Խեչոյան, • «Ուժի դրսևորման գործառույթները միջազգային քաղաքականության և անվտանգության համատեքստում», դասախոս՝ Գրիգոր Բոյախյան: <p>Տարվում են նաև աշխատանքներ Կառավարման ամբիոնի կողմից:</p>
<p>6.7.2. Անգլերենով դասավանդողների խրախուսման կառուցակարգի մշակում և կիրառում</p>	<p>Ընթացքում է:</p>